ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ — Թիւ 2,664 — Կ. ՊՈԼԻՍ. 1905, ՅՈՒՆԻՍ 16 — 29 — 25 ԲԷՊԻ ԻԼԻ ԱԽ՛, 1323 — 16 ՀՈՒԼԻՍԱՆ 1321 — ՀԻՆԳՇԱԲԹԻ

پوزانتیون

امتیجه یومی وسیاسی غزته، صاحب شرکه مساهمه

پوزانت کیچیان

مطبعه‌سی بابعالی جاده‌سی نومره ۲۳-۲۵

ادره‌خانه‌سی

Բիւզանդիոն

ՀԱՑԱԹԵՐԹ ԱՄԵՆՕՐԵԱՑ

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
ԲԻԶԱՆԴ ՔԻԶԵԱՆ

PUZANTION
Journal Arménien Quotidien,
Politique, Financier et Littéraire
Directeur - Propriétaire
PUZANT KÉTCHIAN
Bab-Ali Djaddéssi, № 23-25
CONSTANTINOPLE

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ՆԻՒ ԵՕՐԲԷՆ

ՄՏՔԻ ԵՒ ԴՈՒՐՍԻ ՄԱՐԴԸ

ՆԻՒ ԵՕՐՔ, Յունիս 11.

Ք.

Ինքնասիրութիւնն առաջին պայման է յաջողութեան, և ամէն մարդ զայն գործադրելու է (ո՛վ որ ալ ըլլայ) այս մտածմամբ.—եթէ առանձին ես՝ ըսէ քեզի, «ես այս գաւաթին ալուս չեմ խմեր և անոր արժէքը մէս գրպանս դնելով բարեգործական համար կ՛յանակցեմ զայն»։ եթէ ընկեր ունիս՝ անոր ալ թելադրէ, և եթէ համբերութիւն չունիս այս փոքր գումարներն իրարու վրայ դիզելու և օր մ՛աղքատանամի մը նուիրելու, դիմացդ ելնող առաջին մարդուն տուր զայն. թէ՛ քեզի և թէ՛ անոր օգտակարագոյն կերպովը գործածած կ՛ըլլաս այդ գաւաթին գինը։ Ինչպէս մարդ իր գործին յաջողութեանն համար մտածելու ժամանակ կ՛յատկացնէ, այնպէս ալ իր այս մոլութենէն ինքզինքն ազատելու համար ըղձորէն միտքը, օրով գազմոյներն առողջ յղացում չունենալով այնպիսին յաջող կեանք ալ չի կրնար ունենալ։

Դալով «ալքօլին չմոռնելուն,» ինքս որ ես չեմ գիտեր թէ ալքօլը կ՛մոռնի՞ թէ չի մոռնիր, բայց սա բանը չատ ուշադրութեամբ դիտած եմ և սա անխնայ օրէնսն յանգած եմ օր, ալքօլը մոռնի թէ չմոռնի, ալքօլը մարդս կ՛մոռացընէ մասնաւորապէս, բարոյականապէս, հոգեւորապէս, դրամապէս, ինչպէս նաեւ պատուով, զգացումով, զգայնութիւնով, ազնուութեամբ, և վերջապէս՝ մարմնով։

Ցայտնի է որ ես միայն գործի մարդ եմ։ Մէկ պատճառն ալ եթէ պնդեմ որ իր սաներին համալսարանական կրթութիւն տացած են, թէև բարոյականի և կրօնի մասին խիստ էր։ Ես ալ իր վարժարանէն եկած եմ. եթէ գրելու մեծ կարողութիւն մ՛ունենայի՝ կ՛գրէի. բայց գիտնալով որ չունիմ, կարդացողներ հրաւիրեցի որ գրեն. չատ չնորհակալ եմ բոլոր խմբագրապետներէն, ինչպէս բոլոր գրողներէն, ոչ միայն անոնցմէ որ համակիր են ինձ՝ հապա նոյնքան ալ անոնցմէ որ ալ քննադատեցին, կ՛բաւէ որ քննադատութիւններէն օգուտ մը յառաջ գայ։ եթէ ժամանակին մտածած ըլլայի, ամէնայն անկեղծութեամբ կ՛ըսեմ, հաւատացէք որ քննադատական ամէնէն զօրաւոր յօդուածն համար ալ նոյնասիրեան՝ եթէ ոչ ապահի բարձր՝ մրցանակ մը կ՛տակացնէի.—ա՛յդան կ՛հաւատամ քննադատութեան։

Վերջապէս, տաւտուրի մաղն ամէն առիթ չահ հանել կ՛սիրէ. այս առիթս ներեցէք որ մէկ երկու խօսք ալ անձնական ընեմ։ Զուտ անձնական խնդիրներ լրագրութեան մէջ գրուելու իրաւունք չունին, բայց ես կ՛ուզեմ անեմցնել ընդհանուր դասեր հանել, կարելի եղածին չափ, այնպէս որ անձնականս ալ ներելի ըլլալու աստիճանին հասցնեմ։

Մարդիկ միշտ հետաքրքիր են. չատրունակ բաներուն արտաքին երեւոյթին տակ պահուած գաղանիքի մը թափանցելու կ՛աշխատին։ Երկու մաթ բաժնուած են այսպէս խորհրդածողները։ Առաջին մասը կազմողներն անկեղծ և բարի մարդիկ են, կ՛ուզեն գիտնալ թէ ի՛նչ բան զիս մղեց այսպիսի ձեռնարկի մը, և ես յօժար եմ ամենայն անկեղծութեամբ գոհացնելու իրենց հետաքրքրութիւնը։ Բարեկամ՝ երեւում էիքնիտ

ւոյն գեղեցիկ եղանակին, ծաղկափթիթ գարունին ամէնէն նշանաւոր օրն է, առատութեան և նուազութեան գուշակը, ու տակաւին այսօր Յունիսի առաջին եօթնեակին մէջ կ'չարունակէ անձրևն իր բարերար գործը, անձանձրոյթ. հոս կ'գոռայ երկինքը, հոն կ'ցոլայ արևը, ապականութար որդեր ալ, թրթուրի պէս, ևլն. ևրեա չգտան բարեբախտաբար, ու առատութիւնն իր լրութեան մէջ է այս կողմերը, ի մեծ խնդութիւն հասարակութեան, մանաւանդ խեղճ աղքատներու։

Զթողունք պարտէզը, ուղղուինք սիրուն գոյնով կեռասներով ակղձուն, օ-բորուն ճիւղին տակ, կամ հօկայ լայնատերև ընկուզենիին հովանւոյն ներքև, կամ պարտէզին ծաղկափթիթ չրջափակը, խոխոջուն առուակի մ'եզրը։ Պիտի հրամցնեն քեզ, ու պիտի մեծարեն կենցաղասէրի մը պատիւներով. «ի կեանս ձե՛ր. բարի՛ առաջեցաք.» ու փոխատուութեան կ'ձայնակցիս, լըսս չափու. «պտղալի՛ց ըլլայ.» և կ'պաշտուի կեռասը, իր բոլոր տեսակներովը ու երանգներովը, անունն թթուաշը կ'ուտես՝ որչափ չէիր կարծեր, չէիր ուզեր, առանց անպատեհութեան, առանց վնասուած ըլլալու, անհանգստութիւն մը զգալու, ինչ կ'ըսեմ, առանց կշտացած ըլլալու, ճիշդ եթէ ելակ ըլլար կերածդ. ու այգիէ այգի կ'տարուբերիս նոր ուժով, այն բարեկամիդ հետ՝ որուն այցելած էիր, կամ որ հրաւիրած էր զքեզ։ Ահա՛ թէ ի՛նչ է Ամասիոյ մասնաւոր պտուտանքը կեռասին, գարնան առաջին ընծային։

Ըսինք թէ չափազանց պտուղ տուին կեռասենիները, այդ հասկցնելու համար բաւ է ըսել թէ մեծ պարտէզի տէրեր պտուղը ձեռքով քաղելէ ձանձրացած՝ հիւրերը մեծարելու համար սղոցով կըտրուած ճիւղեր՝ լեցուն կեռասով՝ հրամցընելու դիւրութիւնը գտած են. — մե՛ծ հնարք. ուրիշ մ'ալ ժառեղով կամ ըսելով որ ծառին վրայ չորցած կեռասը պատճառ կ'ըլլայ նաև ծառին չորնալուն՝ պըտուղը քաղելու համար կ'կանչէ աղքատ ընտանիք մը և «քաղէ՛, տա՛ր, կ'ըսէ, որչափ կրնաս, օրական ճաշդ, ուտելիքդ ալ ինձմէ։»

Կեռասը չուկային մէջ ծախուեցաւ 10—20 փր. օխան։ Բայց սպառումը չատ մեծ եղաւ, կ'ըսեն, արտածումով Ամասիայէ դուրս քաղաքներ, Սամսոն, որ Ամասիոյ պտուղներուն գլխաւոր սպառելին է, Մարզուան որուն կեռասը կ'գովեն, բայց բարձրագիր ըլլալուն՝ պտուղներն ապաժամ են, Հավզա, Զօրում, Բէօզիւ, Եօզղատ, Եւդոկիա կ'տանին բաւական մեծ քանակութեամբ և այս տարի բացառաբար մինչև Կեսարիա ղրկուած է կեռաս։ Պաշտօնական վիճակագրութիւն մը կ'պակսի մեզի ճշդելու կեռասի սպառումին քանակութիւնը. մինչին հաշուով օրական 200բեռ արտածում հաշուելով, բաղկացեալ 10 պաթմանէ և պաթմանը 1—1 1/2 ղրուշէն վերիվերոյ՝ 1000—1500 ոսկի կ'արդիւնաբերէ կեռասն Ամասիոյ, 2 ամսուան մէջ, կուշտ ու կուռ անխնայ ուտելէ վերջ։

Պտուղներուն մէջ կեռասը կ'ճանչնանք՝ որուն չորն օգտակարութիւն մը չունի, կամ Ամասիացիներ չեն գիտեր, և ծառէն քաղուածին պէս՝ ուտուելէ զատ ուրիշ բանի չի ծառայեր. չգիտցանք նաև թէ անոր կուտին խնդրանքն ո՛ր աստիճան յաջողեցաւ և ինչի՛ պիտի գործածուէր։

Ե. ԵՐԿԱԹԵԱՆ

ՊԱՏԵՐԱԶՄ

Ի՞ՆՉ Կ'ԱՆՑՆԻ Կ'ԴԱՌՆԱՅ ՄԱՆՋՈՒՐԻՈՅ ՄԷՋ

Ո՞ՒՐ ՄՆԱՑ ՀԱՇՏՈՒԹԻՒՆԸ

Հաշտութիւնն յոյնական կաղանդին չմնաց, որովհետև Օգոստոս ամսուան մէջ բանակցութիւնք պիտի սկսին, եթէ Տէրը կամենայ։ Մինչև Օգոստոս ամիսը չատ ջուր պիտի հոսի Սունկարիի և Դիւմէնի կամուրջներուն տակէն, և, որ ցաւալին է, դեռ չատ արիւն պիտի թափի Մանչուրիոյ դաշտերուն ու գետահովիտներուն մէջ։ Զօր. Լինիեւիչ հաւատաց թէ իր բանակը կազմ ու պատրաստ է, և ուրիշ փափաք չունի բայց եթէ ջախջախել Օեամայի բանակը։ Լինիեւիչ, հետևապէս, կ'սկսի Քուռոբաթքինի պէս, որ նմանօրինակ յուսալից յայտարարութեամբ մը ձեռնարկեց այն պայքարներու չարքին որոց յաջորդական հանգրուաններն եղան Լիաօ—Եանկ, Շա—Հօ և Մուգտէն։ Այն անզգայ զանգուածն որ Օեամա կ'կոչուի՝ ռուս սպարապետին մեծադղորդ խօսքերէն երկիւղ կրելու դէմք չունի։ Ամենայն պաղարեամբ ի գործ կը դնէ հասուն խորհրդածութեամբ պատրաստած իր յառակագիծը, և իր չարժումներուն դանդաղութիւնն իսկ հաւաստիք կը նկատուի վճռական արդիւնքի։ Առաջին բախումներուն վրայ ունինք երկու կողմերուն ալ պաշտօնական հեռագիրները։ Երկու կողմերն ալ կ'հաստատեն թէ Ճարոնցիք եռ մղեցին իրենց դէմ եկող ռուս զօրագունդերը, և Քորէայի հիւսիսային ծայրէն արշաւեցին, Դիւմէն գետին վրայէն, Ռուսիոյ Ծովային Նահանգը, որուն գլխաւոր կեդրոնն է Վլատիվոստոք, բուն ռուսական հող, որ Սիպերիոյ չարունակումն ու վերջացումն է Խաղաղականի վրայ։ Գործողութիւնք տեղի կ'ունենան յոյժ ընդարձակ ճակատի մը վրայ, որ Դիւմէն գետէն կ'տարածուի մինչև Սունկարիի հովիտը, Ճարոնցիներուն աջ թևը կազմելով Հաղէկաւայի բանակը, և ձախ թևը՝ Նօկիի զօրավարը, մինչ գըլխաւոր բանակը, Քուրօքիի, Օքուի և Նօծըի հրամանին տակ, պաշտօն ունի պարագային համեմատ մէկ կամ միւս թևին այժ տալով, Լինիեւիչի հաղորդակցութիւնները կտրելու, մի կողմէ Վլատիվոստոքի, միւս կողմէ Խարպինի հետ։ Զօր. Քաւմուրտյի դիրքն անորոշ է, և հաւանական է որ այս անգամ ալ անակնկալ մը պատճառէ։ Մինչև հիւսիսային Քորէայի ծայրն զբաղեցնելով Ռուսերը, Օեամա կը ճգնի զանոնք խախտել իրենց ծանրութեան կեդրոնէն, այսինքն՝ Խարպինէն, մինչ Լինիեւիչ կ'յուսայ մեկուսացնել Հաղէկաւան և առանձինն ջախջախել զայն, փրկելով Վլատիվոստոքը վերահաս պաշարումէն։ Ռուսաց առաւելագոյն թիւն է 300,000, մինչ Ճարոնցիք նուազագոյն հաշիւով 500 հազարէն աւելի են։ Ռուսաց ճակատը պարզուած է ընդ մէջ Վլատիվոստոքի և Խարպինի, կեդրոն ունենալով Քիրինը։ Այս պայմանաց մէջ, ճանչնալով երկու կողմերուն ալ պատերազմիկ կարողութիւններն՝ ինչպէս մէկ ու կէս տարուան փորձը ցուցուց, ներելի չէ տարակուսիլ առաջիկայ մեծ ընդհարումին ելքին վրայ։ Բայց պէտք չէ աճապարել, և մի քանի միամիտ թղթակիցներու կամ հեռագրական գործակալութիւններու պէս օրն երեք անգամ ծանուցանել թէ «ռուսական բանակը պաշարուեցաւ»։ Լինիեւիչ մինչև ցարդ այնքան անգամներ պաշարուեցաւ մէկ ու կէս ամիսէ ի վեր որ ա՛լ վարժուած ըլլալու է ադոր։ 300,000 զօրք, 100 մղոն ճակատ մը բռնած, այն ալ Մանչուրիոյ լեռնոտ վայրերուն մէջ, անանկ դիւրաւ չի պաշարուիր։ Բայց ճարոնական յառակագիծը կ'միտի վերջ ի վերջոյ Ռուսերը կտրելու իրենց հաղորդակցութեան մեծ գծէն, որ է Խարպինի ճամբով Սիպերիոյ երկաթուղին։ Զրկուելով երկաթուղւոյ գծէն, ռուս բանակն ուչ կամ կանուխ կ'քայքայուի, մինչ բանակի մը բարոյական և նիւթական ույժն իր կազմակերպութեան մէջ է, իր զանազան մասերն իրարու հետ զօդող կապերուն մէջ է, և ո՛չ թէ ցիր ու ցան ույժերու թուական բազմութեան մէջ։

Թայմզի զինուորական մասնագէտը, խօսելով առաջիկայ մեծ ճակատամարտին վրայ, կ'ըսէ.—«Դժուար է ճշդել Լինիեւիչի ույժերը։ Իրեն հետ ունի սիպերեան վեց զօրաբանակները, և վեց զօրաբանակ եւրոպեան Ռուսաստանէն,— երկերկու զօրաբաժիններ բանակներ,— նաև վեց անկախ կիսաբաժին հետևակներու, խառն զօրաբաժին մը, նաև հեծելազօրք և ուրիշ մանրամասնութիւններ։ Առ առաւելն 300,000 զօրք ունենալու է ուրեմն։ Երկաթուղիին վիճակին վրայ վերջերս չատ լուր չառինք, և անշուշտ ահագին ճիգ մ'ըներ հարկ եղած է տեղը լեցնելու համար երկաթուղիի կազմածքներու, վայրաշարժերու (լոքոմոտիվ) և չոգեկառքերու (վակօն) կորստեան որուն մատնուեցան Ռուսերը Մուգտէնի պարտութեան հետևանօք։ Զօր. Լինիեւիչ չատ ծանր գործ մը ստանձնած է, և չենք կրնար պախարակել զինք եթէ անյաջող ելնէ այնպիսի բանակով մը որ չարաչար հարուած կրած էր ի Մուգտէն. զի Մուգտէնի պարտութիւնն այնպիսի դէպք մ'էր զոր բանակ մը չատ չի կրնար մոռնալ։ Ռուսերը կ'ըսեն թէ Լինիեւիչ ունի այժմ իննն ինչէգնոց և 12 ինչէգնոց խոչոր թնդանօթներ։ Զեն ըսեր թէ արդեօք ղրահաւորնե՞ր պիտի չինէ Ամուր գետին կամ Սունկարի գետին վրայ, բայց 12 ինչէգնոց թնդանօթ մը նոյնքան կ'պատշաճի դաշտային բանակի մը որքան ուղտի ձագ մը տիկնոջ մը զարդասենեկին։ Թէ այս ծանր կազմածքներ Ռուսիայէն ղրկուած ըլլան՝ տարակուսելի է։ Աւելի հաւանական կ'ըլլար ըսել թէ Վլատիվոստոքի ծանրագոյն սպառազինութեանց մէկ մասն եռ առնուեր է հիմակուց։ Զենք գիտեր թէ Ռուսիա միաքը դրա՞ծ է 528 թնդանօթներու նոր փոնդ մ'ընծայել Ճարոնցիներուն, ինչպէս ըրաւ ի Բորդ Արթուր։

«Լինիեւիչ կարող է իր ամփոփած ույժերով մարտնչել Օեամայի դէմ, մի կողմ թողլով Հաղէկաւան, բայց Ճարոնցիք ալ հարկաւ կ'կռահեն այս չափը, և հետևաբար, ճարոնական կեդրոնը բաւական զօրաւոր պիտի ըլլայ Ռուսաց գլխաւոր բանակին քախումը փչրելու համար։ Ճարոնի մեծ բանակներն այնքան յառաջխաղացած են արդէն որ Հաղէկաւայի ընթացքը պաշտպանուած է, մանաւանդ որ Ռուսերն անկարող են երկաթուղիէն չատ հեռի տեղեր յառաջ ընթանալու։ Ճարոնական յառակագծերուն ամէնէն աւելի յարմար պիտի գար ռուսական համախմբում մը Դիւմէն գետին սարերին հովտին վրայ, բայց Հաղէկաւա դեռ այնքան հեռի չգնաց որ Ռուսերն իր վրայ հրաւիրէր, ինչ որ կ'արժէր ընել, իրենց կեդրոնական յենարանէն խլելու համար Ռուսաց մեծ թիւ մը։

«Գլխաւոր բանակներն անարգել պիտի չկրնան քալել, զի Խաղախներն անշուշտ ամէն տեղ թեթևցուցած են Զինացիներուն բեռները, և աւելորդ ուտեստ չեն թողած անոնց ձեռքն որ յառաջացող Ճարոնցիք դիւրաւ հայթայթեն իրենց պաչարը։ Խաղախը քիչ բանի յարմարութիւն ունի, բայց ամէնէն աւելի յարմար է անցած դարձած տեղերուն մէջ ուտեստեղէն ու պաշար չձգելու։ Կէս միլիոն հոգիի և 125,000 ձիու եւրոպեան ձեւով ու չափով պաշար հասցնելու համար օրական երկու հազար թօնօ մի միայն ուտեստեղէն հարկ է, այսինքն՝ եօթն կառախումբ 300ական թօնօ բեռ տանող, մէկ մի վակօն ութ թօնոյով, և իւրաքանչիւր կառախումբ 37 վակօնէ կազմուելու պայմանով։ Այս հաչուի մէջ չեն ռազմամթերքն և զուտ զինուորական պիտոյքը։ Յորչափ բանակն յառաջխաղայ, երկաթուղիին նորոգումն ալ հարկ անհրաժեշտ է, և նոյն իսկ ճարոնական բանակի մը գլխաւոր զանգուածն երկաթուղիի կայարանէն կամ չոգենաւու նաւահանգիստէն 60 մղոնէ անդին չի կրնար գործել աղդաւասլէս, ի բաց առեալ հեծելազօրքի արշաւանքներն որք աւելի հեռի կրնան երթալ այս յենակէտներէն։

«Ռուս լուատեսները, — զի այս կարգի մարդիկ ալ կ'գտնուին դեռ, — գոհութեամբ կ'խորհին թէ ճարոնական բանակը, իր բնական կեդրոնէն այնքան հեռացած, չատ նեղ վիճակի մը մէջ ըլլալու է, ճիշդ ինչպէս Ռուսերը կ'նեղուէին իրենց բնական կեդրոնէն չատ հեռի կռուելու սովորութեան համար։ Եւ իրօք, Լինիեւիչ կուլ տուած ըլլալու է այն միսիթարական պատմութիւնները զոր իրեն ըբեր են գերի բռնուած ճարոնցի ձիաւորք ոմանք, առասպելախառն վէպեր զրուցելով իրենց բրինձի պաշարին հատած ըլլալուն վրայ, ինչպէս և իրենց ռազմամթերքին ու պաշարներուն սպառած ըլլալուն վրայ։ Մեք այս ձիաւորները կ'յիշենք, և Քուրոբաթքինն ալ յիշելու է, զի ճարոնցի անօթի մնացած գերիները Ռուսաց ձեռք իյնալն առկէ առաջ ալ կարևոր ճակատամարտներու յառաջընթաց նշանն եղած էր։ Բայց վերջապէս, եթէ Ճարոնցիք զէնքերու և ռազմամթերքի համար այնքան նեղն ինկեր են, ինչո՞ւ չգործածեն 112,000 ռուսական նոր հրացանները և 34 միլիոն հրացանի փամփուշտները, զորոնք գրաւեցին վերջին ճակատամարտներուն մէջ, նաև այն 814 թնդանօթները և կէս միլիոն լեցուն ռումբերը։ Այսչափ ինչ ի ձեռին ունենալով, Ճարոնցիք չէ պիտի չըսեն երբ Լինիեւիչ գայ զիրենք զարնել, և ռուս սպարապետը տեղի չունի վախնալու որ Ճարոնցիք իր ձեռքէն կ'պրծին կ'փախչին՝ զէնքի և ռազմամթերքի պակասութիւն պատրուակելով։»

«Գալով Ճարոնցիներուն երկաթուղիի հաղորդակցութեան, արդելք չկայ երկարաձգելու և ի հարկին քառապատկելու Տալնիէն և Նիւ Զուանկէն մինչև Մուգտէն և աւելի անդին տարածուող գիծը։ Ուրիշ գործ է այս աչխատութիւնը թափել 100 կամ 200 մղոն գծի մը վրայ, ուրիշ բան է նոյնը փորձել Սիպերիոյ 5,000 մղոննոց գծին վրայ։ Ուրեմն, Ճարոնցիք միշտ գերազանց կ'մնան ամէն տեսակէտով։»

ՇԱՀԵԿԱՆ ԷՋ ՄԸ

ՃԱՐՈՆԻ ՊԱՏՄՈՒԹԵՆԷՆ

Ճարոնցի իչխան Արիզուկավա և իչխանուհին, որք գերման գահաժառանգին հարսանեաց ներկայ ըլլալու համար Պերլին գացած էին, անցեալ Բչ. Լոնտոն ժամանեցին և խանդավառ ընդունելութեան մը արժանացան։ Անգլիական ժողովուրդը առիթէն օգտուելով կ'ուզէ բացառիկ պատիւներ ընծայել դաչնակից մեծ Տէրութեան իչխանական ներկայացուցիչներուն։ Ճարոնցի իչխաններ ուրիշ պատեհութեամբ այցելած են արդէն Անգլիա. նոյն ինքն Արիզուկավա իչխանն էր որ հանգուցեալ Վիքթորիա թագուհւոյն ադամանդեայ յոբելեանին առթիւ եկած էր Լոնտոն, բայց այս անգամուան այցելութիւնը բացառիկ նչանակութիւն մը ունի անշուշտ։

Արիզուկավա ընտանիքը Ճարոնի կայսերական չորս գերդաստաններէն մին է, որ կրնայ Գահը ժառանգել, եթէ Միքատօն ուղղակի գծով արու ժառանգորդ չունենայ։ Մինչև 1879, երբ Ճարոնի գահաժառանգը ծնաւ, Ճարոնի Գահուն թ'կնածուն էր Արիզուկավա իչխանը։

Արիզուկավա գերդաստանը հաստատուած է ԺԷ. դարու վերջերը, ձեռամբ իչխան Եօշիհիդոի, եօթներորդ որդին Կօ Եզօ կայսեր, (1587—1611)։ Ներկայ Արիզուկավա իչխանը, ինչպէս նաև իր նախորդը՝ Արիզուկավա Դարուհիդօ, որդեգիր զաւակներն են Նինքօ կայսեր, որ արդի Միքատոյին մեծ հայրն է։ Ճարոնական սովորութեան համաձայն երբ մէկը որդեգիր կ'ըլլայ, նոյն արիւնէ սերեալ զաւկի մը բոլոր իրաւունքները, առանձնաչնորհումներն և պարտաւորութիւններն ալ միասին կ'ընդունի։ Այս պատճառաւ է որ Արիզուկավա որդեգիր իչխանները Ճարոնի Գահը կրնային բարձրանալ, եթէ արդի Միքատօն արու զաւակ չունենար։

Հանգուցեալ Դարուհիդօ իչխան կարևոր դեր մը խաղացած է Ճարոնի ժամանակից պատմութեան մէջ։ Պետական զօրաց մէջ Միքատոյին չահերուն օրինաւորութեամբ ծառայելէ վերջ, ինքզինք նուիրեց զինուորական կազմակերպութեան, և բանակին մէջ ալ մտնելով, արիւնոտ պատերազմներու մասնակցեցաւ։ Ճարոն չատ բան կ'պարտի Արիզուկավա Դարուհիդօ իչխանին, այն հիանալի ջանքերուն համար զոր անիկա նուիրեց պատերազմական պաշտօնատան և բանակի կազմակերպութեան. այսօր բովանդակ աչխարհ կը հիանայ անոր ողջախոհ գաղափարութեան և անձնուէր ջանքերուն յառաջ բերած արդիւնքին վրայ։ Արիզուկավա, առանց կարեւորութիւն ընծայելու դասակարգային եւ ընկերական տարբերութեանց, բարձրագոյն պաշտօններու կ'կոչէր լաւագոյն սպաները, եւ միշտ անոնց խորհուրդին կը հետևէր։ Զինեճարոնական պատերազմի միջոցին Սպայակոյտի պետն էր. մեռաւ դաշտին վրայ, որովհետև իր պարտականութեանց կատարման համար չէր վախցած անձնապէս մասնակցելու ազգային կռիւին։

Արդի իչխանը, Արիզուկավա Դաքեհիդօ, իր կեանքի ամբողջ ընթացքին արժանաւոր հանդիսացաւ իր եղբօր, և ցոյց տուաւ պարտականութեան միևնոյն խղճամիտ զգացումը. ունի միևնոյն ընդունակութիւնները (որոց մէջ իր վեհապետն ալ այնքան նչանաւոր է արդէն) լաւագոյն խորհրդականներ ընտրելու. նոյն համեստ անձն է որ չախորժիր հանրային ցոյցերէ, իր կատարած ծառայութեանց փախարէն։ Իր եղբօրն բովանդակ գործունէութիւնը նուիրեց բանակին. ինքն ալ նաւատորմին մէջ ծառայեց. իր նաւային նախնական կրթութիւնն ստացաւ, չատ ուրիշ ճարոնցի սպաներու նման, անգլիական նաւատորմին մէջ. իր ծովային գիտութեան առաջին սկզբունքները կը պարտի անգլիացի սպաներու։

Արիզուկավա Դաքեհիդօ 17 տարեկան էր, երբ մտաւ անգլիական մարտանաւի մը մէջ, ուր երկար ատեն ծառայելէ վերջ, իր կարողութիւնները ճանչցուեցան. յետոյ ծառայեց Մանչի անգլիական տորմիղին մէջ և միանգամայն Կրինուիչի Արքայական նաւային Քոլէճին մէջ ուսաւ։ Դաքեհիդօ ճարոնական նաւատորմին մէջ մտնելով, 12 տարի ծառայեց ենթասպայի աստիճանով, երբ Զինեճարոնական պատերազմը ծագեցաւ, հրամատարի աստիճանին բարձրացած էր արդէն։ Պատերազմի միջոցին հրամատար կարգուեցաւ Մացուշիմա յածանաւին, որ այն ատենուան ճարոնական նաւատորմին զօրաւորագոյն մարտանաւն էր։ 1894—5ի ծովակալի ձմրան միջոցին Բէչիլիի ծոցին զինուորական գործողութեանց մասնակցեցաւ. բայց յանկարծ նոյն պահուն Թօքիօ կանչուեցաւ, որովհետև իր եղբայրը մեռած էր։ Ցուղարկաւորութիւնը կատարուեցաւ պետական ծախքով։ Տասներկու հազար հոգի մասնակցեցան թափօրին, որ ձմրան ցուրտ բայց պայծառ առաւօտ մը, վեց մղոնէ աւելի տեղ պտըտեցաւ Թօքիոյի փողոցներուն մէջ, որոց երկու կողմը բիւրաւոր սգակիրներ չարուած էին։ Բովանդակ թափօրին մէջ, որ ծաղիկներէն և քաղաքային ու զինուորական համազգեստ կրող անձերէն նկարագեղ երեւոյթ մը առած էր, ամէնէն աւելի աչքի կ'զարնէր երիտասարդ Արիզուկավա իչխանը, որ ոչ պալատական կառք նստած էր, ոչ չքեղ համազգեստ կ'կրէր, այլ միայնակ և հետիոտն, դագաղին ետեւէն կ'երթար գլխաբաց, պարզուկ Ճարոնցիի մը նման ճերմակ բրդէ վերարկու մը հագած, ոտքն անցուցած յարդէ հին ոտնամաններ, և ձեռքը բըռնած՝ պամպուէ պարզ գաւազան մը։ Ճարոնի հնաւանդ սովորութիւնը կ'պահանջէր որ յուղարկաւորութեանէն առաջ ինքը 50 օր բոլորովին առանձնանար և մարդոցմէ հեռու ապրէր։ Բայց պարտականութեան ձայնը չատ աւելի զօրաւոր էր իրեն համար, քան սովորամոլութեան գաղափարը կամ իր անձնական կսկիծը։ Այս պատճառաւ, իչխանը, նոյն իսկ յուղարկաւորութեան յաջորդ օրը գնաց իր մարտանաւը. բայց նոյն ատեն Ուէյ Հայ Ուէյ ինկած էր և ինք մէկ քանի օր միայն ուշ մնաց, ուղղակի մասնակից ըլլալու համար չինական նաւատորմը փճացնելու փառաւոր գործին։

Զինեճարոնական պատերազմէն վերջ իչխանը ծովակալ հրամատար անուանուեցաւ Եօքօսուքայի, որ Ճարոնի Բորդսմութն է. այս հանգամանքով անիկա կարևորագոյն դերն ունեցաւ ճարոնական տորմիղին մեծագոյն մասին կազմակերպութեան մէջ։ Իբր զինուորական նաւահանգստի հրամատար ալ այնքան նչանաւոր հանդիսացաւ, որքան եղած էր իբր յածանաւի հրամատար։ Իր զօրաւոր և ազդու նկարագրով մեծ ներգործութիւն կ'ըներ իր հրամանին տակ գործողներուն վրայ, և ստորադասեալներուն կ'ներշնչէր անձնուրաց նուիրում պարտականութեան ձայնին, որուն կ'հետևէր ինքն արդէն. ամէն Ճարոնցի կ'սիրէ և կ'յարգէ զինքը, թէ՛ իբրև առաքինութեանց մարմնացում, որ «Սամուրայի բարձրագոյն տիպարն է», թէ՛ իբրև քաղաքացի, ամուսին, հայր, և իբր տէրութեան ամէնէն խղճամիտ ու կարող ծառաներէն մին։ Ինքը թէպէտ իր բոլոր հայրենակիցներուն վստահութիւնը կ'վայելէր և իր կարողութեամբն ալ արժանի եղած էր ծովապետութեան աստիճանին բարձրացուելու, բայց Թօկօ աւելի փորձառու և ժողովրդական դէմք մ'ըլլալուն, ան ստանձնեց ճարոնական նաւատորմին վերին հրամատարութիւնը, ճիշդ ինչպէս հարիւր տարի առաջ Անգլիացիք ըրին Նէլսընի համար։

Արիզուկավա իչխանուհին ալ, կայսուհիէն սկսելով ամէն ճարոնուհիի նման, մինչև Թօքիոյէն մեկնումը, գործօն մասնակցութիւն մը ունեցաւ Կարմիր Խաչի կազմակերպութեան և վարչութեան մէջ. աչխատեցաւ նաև ուրիշ ընկերութեանց համար, որք կազմուեցան Ճարոնցի վիրաւորներուն և անոնց թշուառ ընտանեաց օգնելու նպատակով. չափազանցած չենք ըլլար բնաւ, երբ ըսենք թէ Ճարոնցի կիները ոչ նուազ հայրենասիրութիւն և պատերազմին յաջող մասնակցութիւն ցոյց տուին, քան իրենց ամուսինները և եղբայրները, որք թէ՛ ծովի և թէ ցամաքի վրայ արիւն թափելու գացին։ Ճարոնուհին կրնա՞ր աւելի բարձր պատիւ մը ընծայել Ճարոնցիին։ (The Times.)

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՃԱՌԱԻ Ռուսիոյ մէջ հաստատուած նոր տուրքերէն մէկն այն է որ դրուած է «Զին»ի վրայ։ Զին մեր պաչտօնական Բիւթճէ բառին համազօրն է (պաշտօնական սահմանաչափ) և իննն դասակարգ է Ռուսիոյ մէջ։ Ամէնէն ստորին Զինովնիկն է Քոլէժսքի Րէկիսդրադօր (արձանագրիչ Ատեանի), ինչպէս ամէնէն բարձր Զինովնիկն է պետական գործօն խորհրդականը։ Պատերազմի պատճառաւ, ամէն Զինովնիկ կամ պետական աստիճանաւոր իր աստիճանին համեմատ տուրք մը պիտի վճարէ։ Ռուս թերթեր կ'ըսեն թէ ամէնէն աւելի պիտի նեղուին քիչ ռոճիկ ստացող պաշտօնեաները։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԿՐՕՆԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆ Ի ՖՐԱՆՍԱ. —Մ. Բօլ Սապադիէ, հանրածանօթ հեղինակը՝ «Կեանք Ս. Ֆրանսուա տ'Ասիզիի» անցեալ Եչ. գիշեր ֆրանսերէն բանախօսութիւն մ'ըրաւ Քէնսինկթընի քաղաքապետարանին մէջ, նիւթ առնելով կրօնական մտածման բարեչրջումն ի Ֆրանսա։ Հանդէսը կազմակերպուած էր յօգուտ Րէֆէցիօնէ Սօլտադիքայ կոչուած ընկերութեան, զոր հիմնած է Մ. Սապադիէ, աղքատ ուսանողները կերակրելու նպատակաւ։ Կ'նախագահէր Սըր Ալֆրէտ Լայըլ։—Մ. Բօլ Սապադիէ բեմ ելնելուն ծափերով ընդունուեցաւ և ըսաւ թէ Րէֆէցիօնէ Սօլտադիքան, այն համեստ ընկերակցութիւնն որ երեք տարի առաջ հաստատուեցաւ աղքատ ուսանողաց ապուր հայթայթելու համար, ամէն տեսակէտով հիանալի գործունէութիւն մը ցոյց տուած է։ Ուսանողներու ֆիզիքական վիճակը բարելաւուած է. անոնց ընթացքն առաջինէն չատ աւելի աղէկ է, և Ասիզի քաղաքին տղաքը գրեթէ դադրած են մուրալէ։ Վարժարան յաճախող տղայոց թիւն ալ չատցած է։ Շատ երախտապարտ եմ, ըսաւ, այն անգլիացի բարեկամներուս, որք առատօրէն կ'օժանդակեն մեր ձեռնարկին, և կ'յուսամ որ այս բարի տրամադրութիւնը պիտի չարունակէ։ Ցետոյ Մ. Սապադիէ իր բանախօսութեան բուն նիւթին անցնելով ըսաւ թէ անգլեւֆրանսական մերձեցումը պէտք է ծնունդ տայ նաև մտաւորական հաղորդակցութեան մը, ընդ մէջ երկու ազգաց, միայն թէ չկայ աւելի դժուար բան մը քան ժողովրդեան մը բարոյական և կրօնական բարեչրջումի հասկնալը։ Այս գործին մէջ թերթերը գրեթէ ոչ մէկ օգտակարութիւն ունին։ Ֆրանսայի կրօնական բարեչրջման վրայ խօսելով նպատակս չէ ռևէ դատ պաշտպանել, այլ կ'ուզեմ պատմական տեսութիւն մը միայն ընել։ Այսօրուան Ֆրանսան խիստ չատ կ'տարբերի տասն տարի առաջուան Ֆրանսայէն. անկէ ի վեր ոչ մէկ վարչական փոփոխութիւն եղած է, ոչ մէկ պատերազմ մղեց Ֆրանսա, ոչ մէկ տնտեսական ծանր տագնապ անցուց, բայց ունեցաւ ուրիշ տեսակէ տագնապ մը, որ Տրէյֆիւսի խնդիրն յառաջ բերաւ։ Այս խնդիրը նոր ուղղութիւն մը տուաւ ֆրանսական մըտքին, և այս ուղղութեան գլխաւոր յատկանիշը սա է որ ամէն Ֆրանսացի եղաւ քաղաքացի։ Այսօր աւելի ընդլայնած է Ֆրանսացիին ունեցած ծանօթութիւնը՝ քաղաքացիութեան պարտականութեան վրայ։ Անոնք հիմա կ'զգան պատասխանատուութեանց ծանրութիւնը, որուն մասին ուրիչները գաղափար չունէին. անոնք կ'զգան թէ միևնոյն մարմնին անդամներն են։ Իրենց հայրենակիցներն աւելի կ'սիրեն հիմա և ուրիշ երկրաց քաղաքացիներն ալ սիրել կ'սորվին։ Ֆրանսայի մտաւորական և բարոյական ընտրելա դասակարգը նորատեսակ հաստատութիւն մը հիմնեց, որ կ'կոչուի Բօբոյական Փօբէ Փօոբի—. այս Մարմնին մէկ ոգին է Բօլ Տէժարտէն. անդամները գիտական զարգացում և կրօնական ոգի ունեցող մարդիկ են։ Իրարու բոլորովին հակակարծիք անդամներ կան, ինչպէս եկեղեցականներ և հակակղերներ, հրեաներ և հակասեմականներ, հաւատացեալներ և լայնախոհներ։ Ասոնք կ'գումարուին և կ'վիճաբանին հանրային բարօրութեան վերաբերեալ խնդիրներու վրայ, ինչպէս է Եկեղեցւոյ և Պետութեան բաժանման հարցը. ոմանք կատարեալ լըջախոհութեամբ և անձերի քաղաքավարութեամբ կ'վիճաբանին։ Մ. Բօլ Տէժարտէն գերիի պէս յարած է այս նոր չարժումին և իր գործունէութիւնը լայնատարած օգուտներ կ'ընծայէ։ Ֆրանսայի կրօնական բարեչրջման մէկ ուրիշ նշանն ալ կ'գտնենք նոյն ինքն Կաթոլիկ Եկեղեցւոյն մէջ. Աբբա Լուազի (Լոֆէյ) պարզուկ քահանայ մ'էր, որ նուաստացուցում զգաց երբ լսեց Եկեղեցւոյ դէմ ուղղուած հեղինական սլաքները, և այն դիտողութիւնները թէ Եկեղեցին կ'զգուշանայ գիտական վիճաբանութեան մէջ մտնելու, վախնալով որ կ'յաղթուի։ Երիտասարդ Դաւիթին պէս, այս կրօնական պայքարին մէջ նետուեցաւ, և ամբողջ ԺԹ. դարու չրջանին ոչ մէկ գիրք այնքան ազդեց կաթոլիկ մտածումներու վրայ որքան իր հատորիկը։ Նշանաւոր դէպք մ'էր այդ որ բովանդակ Եւրոպա ազդուեցաւ պարզուկ քահանայի մը խօսքերէն. այդ աբբան թէպէտ առանձինն կ'ապրէր, բայց իր ջանքերը կղզիացեալ չմնացին և իր ազդեցութիւնն ուրիշ գործակիցներու հետ, անսահման եղած է։ Այնուհետև Մ. Սապադիէ խօսեցաւ լայնախոհներուն վրայ, բացատրեց անոնց չափաւորեալ ընթացքը՝ հանդէպ կրօնական խնդիրներու և ծանրացաւ Տէհէրմի վրայ, որ «գաղափարներու գործակցութեան» պէտքն երևան հանած էր։ Տէհէրմի վարդապետութիւնը սա էր թէ նիւթական գործակցութիւնը պէտք է գայ գաղափարային գործակցութեան ետեւէն, ինչպէս որ ծաղիկը կ'բուսնի տունկէն։ Ի վերջոյ, բանախօսն ըսաւ թէ ներկայ ժամանակին մէջ ի Ֆրանսա մտածումը միանգամայն ազատ և խորապէս կրօնական է։ Ֆրանսական ժողովուրդն հաւատք ունի — հաւատք մը որ իր ույժով կ'գերազանցէ չատ մը Եկեղեցիները. այդ հաւատքին խորհրդանչանը կ'գտնենք Սերմանողին առակին մէջ (Մտթէ)։ (The Times)

ՇՈՒԷՏԻ ԱՐՔԱՅԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԸ.— Շուէտ—Նորվեկիոյ գահաժառանգ իչխանին որդւոյն՝ Գօննօդի Մարկարիդա իչխանուհիին հետ ամուսնութեան պահուն հետաքրքրական է յիչել թէ Շուէտ—Նորվեկիոյ արդի Արքայական Տունն ամուսնական ի՛նչ կապեր ունեցած է։ Ինչպէս ծանօթ է, Շուէտ – Նորվեկիոյ Արքայական Տան հիմնադիրն եղաւ Ֆրանսացի Մարէչալ Պեռնատօթ, որ նշանաւոր հանդիսացաւ Նաբոլէոն Առաջինի մղած պատերազմներուն մէջ։ 1810ին գնաց Շուէտի Կարոլոս ԺԳ. թագաւորին մօտ, և անոր մտնելով, կռուեցաւ Ֆրանսացւոց դէմ, և Շուէտի թագաւոր եղաւ 1818ին, Կարոլոս ԺԴ. անունով։ Պեռնատօթ պարզ սպայ եղած ժամանակ ամուսնացաւ Գլարի անուն Մարսիլեցիի մը հետ, հարուստ վաճառականի մը զաւակ, հետևեալ հետաքրքրաշարժ պարագաներուն ներքև։ Գլարին ամուսնութեան խնդրած էր նաև թնդանօթաձիգ զօրաց երիտասարդ, այլ աղքատ սպայ մը։ Ընտանիքը խորհուրդ գումարեց և ըսա որուն սպային անդրանիկ եղայրն արդէն ամուսնացած էր աղջկան միւս քրոջն հետ, յարմար չտեսնուեցաւ որ Գլարի ալ քրոջն ամուսինին հետ ամուսնանայ։ Ուստի սպային մերժողական պատասխան տրուեցաւ։ Քիչ մը վերջ, ուրիշ սպայ մը ներկայացաւ, ան ալ երիտասարդ և աղքատ, բայց աւելի համոզիչ լեզուով, և Գլարին անոր տրուեցաւ։ Առաջին սպան Նաբոլէոն Պօնաբարդն էր, որ դեռ այն ժամանակ թնդանօթաձիգ զօրաց հարիւրապետ էր, իսկ երկրորդ սպան էր Պեռնատօթ։ Հետևաբար, Մարսիլիացի վաճառականի մը այն բախտաւոր աղջիկն որ կրնար կայսրուհի ըլլալ օր մը, եղաւ թագուհի, և չատ լաւ բախտ ունեցաւ։ Իր զաւակը, Օսքար Ա., ամուսնացաւ Լէօխդէնպերկի իչխանուհիի մը հետ. Օսքար Ա. ի զաւակը, Կարոլոս ԺԵ., ամուսնացաւ Հոլանտացի իչխանուհիի մը հետ, իսկ իր զաւակը, այժմու Օսքար Բ. թագաւորը, ամուսնացաւ Նասսաուի իչխանուհիի մը հետ։

ԲԱՆԱՍՏԵՂԾ ՄԸ ՈՐ ՄԱՐԴԱՍՊԱՆ Կ'ԸԼԼԱՅ.—Բարիզ, յուզումնաւէտ ոճիրներու այդ ոստանը, անցեալ չաբթու ալ կանատես եղաւ ամուսնական չարժառիթներէ դրդուած ուրիշ սպանութեան մը դատին, որ իր հետաքրքրականութեամբը կ'հաւասարի մեր երէկուան թուով նկարագրուածին։—Տէյլէ Թելէկրաֆի բարիզեան թղթակիցը կ'գրէ թէ բաւական տարիներ առաջ Արման Կալի անուն քսանամեայ երիտասարդ մը կ'համակրի տասնեւննամեայ օրիորդի մը, որ փոխադարձաբար անտարբեր չէ՛ մնար։ Երկու կողմի ծնողքները կ'հաւանին այս միութեան. բայց Արման նոյն միջոցներուն անգործ կը մնայ, և որովհետև բանաստեղծի յատուկ տես խառնուածք ունէր, ապագան սև կը տեսնէ, իր կինը չի կրնար ապրեցնել և անկէ բաժնուելու մտածումներ կ'ունենայ։ Իր այս խորհուրդը ո՛չ աղջկան և ոչ ալ իրեն ծնողաց կ'հաղորդէ, և փոխանակ իր քսան տարեկան երիտասարդի աչխուժութեամբը գործ փնտռելու, «երկուքս ալ գիրկ գիրկի մեռնինք» կ'գուչէ իր սրտի հատորին։ Դեռատի աղջիկը կ'երևայ թէ այս գաղափարէն հրապուրուեցաւ. այս՛, իրենք միասին պիտի մեռնէին, որով իրենց ծնողքն ու ազգականները պիտի ողբային իրենց դժբախտ ճակատագրին վրայ, և թերթերը պիտի գրէին. «Աւասիկ նորէն սիրային կրկնակ անձնասպանութիւն։» Այսպէս, երկու երիտասարդ «ողբերգակ դերասանները» միասին գացին պանդոկ մը, ուր Արման լեցուած ռեվոլվեր մը բերաւ։ Մէկ թևով իր սիրուհին գրկեց և միւսով երկու գնդակ արձակեց. աղջիկը վայրկենապէս մեռաւ. յետոյ ռեվոլվերն իրեն դարձուց և նոյնպէս երկու գնդակ արձակեց. բայց ինք չմեռաւ. ստացած վէրքերը ճարտարութեամբ խնամուեցան. վերջապէս օր մ'ալ բոլորովին բուժուեցաւ, և իբր մարդասպան ամբաստանուեցաւ թեան տակ ինկաւ։ Դատավարութիւն կատարուեցաւ, և պերճախօս ու յուզիչ փաստաբան մը պաշտպանեց զինքը։ Աչքերը արցունքով լեցուն և մէկ ձեռքը թաչկինակ բռնած, փաստաբանը խնդրեց երդուեալ դատաւորներէն, որ թոյլ տան իրեն կարդալ ամբաստանեալին գրած մէկ քանի բանաստեղծական յուզիչ տողերը։ Երդուեալ դատաւորներն այդ քերթուածներուն հեղինակին իսկապաշտութեան վըրայ բնաւ չկասկածեցան և անոնց մէջ Միւսէէն ներշնչուած տողեր գտան. ամենքն ալ խոստովանեցան թէ անկեղծօրէն գրուած կտորներ են։ Ամբաստանեալ բանաստեղծը Միւսէին պէս կ'ըսէր թէ իր գերեզմանին վրայ թող ուռենի մը տնկեն և իր մահէն վերջ թող սիրտը թաղեն իր տրտմահառուին պատուհանին տակ։ Այն տեղ պիտի ծաղկէին վայրի վարդեր, զոր սիրահարի ձեռքեր պիտի քաղէին։ Երդուեալ դատաւորները չատ յուզուեցան այս բանաստեղծութեան ընթերցումէն, և անմիջապէս անպարտ արձակեցին Արմանը, և այսպէս, բանաստեղծն ընդհանուր ծափահարութեանց մէջ մեկնեցաւ դատարանէն։ Բայց պատմութիւնն հոս չմնար։ Դերակամս Պորէլլի Կօլօոսի անցեալ ուրբաթի թուով կ'գրէ.— «Ահաւասիկ չատ զուարճալի խնդիր մը։ Արման Կալի անուն մէկը կին մը կ'սպաննէ, յետոյ կը փորձէ ինքզինքն ալ մեռցնել, բայց անշուշտ, չի յաջողիր, ինչպէս չատ անգամ կ'պատահի։ Դատավարութեան միջոցին պաշտպան փաստաբանը կ'կարդայ ամբաստանեալին վերագրեալ բանաստեղծութիւն մը, զոր սակայն ես գրած և հրատարակած եմ Կօլօոսի մէջ, երեք տարի առաջ։ Երդուեալ դատաւորները կ'յուզուին և անպարտ կ'արձակեն ամբաստանեալը։ Կարծեմ թէ չնորհակալութեան արժանի եմ։» Անպարտ արձակման վճիռը կարելի չէ վերաքննութեան ենթարկել։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՌՕՐԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

Քաղաքապետական Ժողովոյ անդամ կարգուեցաւ Թղթակցութեանց Դիւանի Տնօրէնի օգնական Մէհմէտ Սայիտ պէյ։—Ուլայի Բ. աստիճան տրուեցաւ Արքունական Հաշուակալութեան Տէֆթէրտար Ֆուադ պէյի։—Ա. Մէճիտիէ պատուանշան տրուեցաւ Հելլէն Ազգ. Պանքային Տնօրէն Մ. Ժան Վալաօրիտիսի. Գ. Օսմանիէ՝ ռուս Կայսերապահ զօրաբանակի զրահակիր հեծելազօրաց դեր—հրամատար Դոդ. Իչխան Վլատիմիր Գալլովքիի։

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ.—Սերպ դեսպանն երէկ տեսակցեցաւ Արտաքին Գործոց Նախարար Թէվֆիգ փաշայի հետ, անոր ապարանքին մէջ։

ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ Ընդհ. դատախազ Ա. Ֆէրիդ Րէշիտ փաչա մէկ երկու օրէ ի վեր տկար է։

ԿԱՌՔԵՐԸ.—Նկատելով որ երբեմն հիւանդներ կ'փոխադրուին վարձու կառքերով, և այս կերպով կրնայ տեղի ունենալ տարափոխիկ հիւանդութիւններու ծաւալման, Քաղաքապետութիւնն որոչեց ասկէ վերջ իր պաշտօնեաներուն ձեռքով հականեխել տալ բոլոր վարձու կառքերը։ Մէկ երկու օրէ ի վեր արդէն սկսան հականեխել Ա., Բ. և Գ. Թաղապետական չրջանակներու կառքերը։

ՀՌՈՄԻ Օսմ. դեսպան Րէշիտ պէյ երէկ իրիկուն Պոլիս ժամանեց Մեսաժըրի Օրիէնթ չոգենաւով, և ուղղակի Կալաթա երթալով, իր յարգանքները մատոյց յոտս Կայս. Գահոյից։

ԱՐԵՒԻԼԵԱՆ Երկաթուղեաց ընկերութիւնն իր կանոնագրին մէկ յօդուածին յենլով, արտօնութիւն խնդրած էր վաճառելու վակոններու մէջ մոռցուած այն առարկաներն որոց տէրերն երևան չեն ելլեր։ Առ այս հարցուած էր Ելմտական Նախարարութեան կարծիքը, որ պատասխանեց թէ այսպիսի առարկաներու վա-

ճառումին գոյացած արդիւնքը կ'պատկանի Պէյթ—իւլ—Մալի։

ՀԱՅՏԱՐ—ՓԱՇԱՅԻ Զինուորական Բժշկական վարժարանին մէջ հաստատուելիք պատուաստարանին յատակագիծը Զինուորական վարժարաններու Վերատեսչութեան կողմէ ղրկուեցաւ Բ. Դուռ։—Զեկուցուեցաւ Սկիւտարի օդային կազի ընկերութեան որ չուտով հարկ եղածն ընէ օդային կազով լուսաւորելու համար վարժարանն և անոր յարակից պարտէզը։—Ելեկտրական վիրաբուժական գործիքներ բերել տրուած էր Հայտար—Փաշայի Բժշ. զինուորական վարժարանին վիրաբուժական տաղաւարին համար, որ կ'գտնուի համբաւաւոր վիրաբոյժ Միւլլըր Ճէմիլ փաշայի տեսչութեան ներքև։ Այս գործիքներ Պոլիս հասան, և մէկ երկու օրէն պիտի սկսուի անոնց զետեղմանը։

ՉԵՂԾ ՊԱՇՏՕՆԵԱՅ —Դատական Պաշտօնատան կողմէ զեկուցուեցաւ Եանեայի Վերաքննիչ Ատեանի ընդհանուր դատախազութեան որ դատի ենթարկուին Բերմէտի Քաղաքապետական չավուշ Շապան աղա, և քարտուղար Եուսուֆ էֆ., որ ինչպէս կ'ծանուցանէ Դատական Պաշտօնատուն հասած տեղեկագիր մը, կաշառք առած են։

ԱՏԱՆԱՅԻ Տիպար Արտին տեսչութեան կողմէ կ'ծանուցուի Հանքաց, Անտառաց և Երկրագործական Պաշտօնատան թէ անցեալները 2½ ժամ անընդհատ կարկուտ տեղալով, ուրեք ուրեք 10, և ուրեք ուրեք 5 սանդիմեթր խաւ մը գոյացաւ, և տեղ տեղ 36 վայրկեան միացին կարկուտի հատերը, որոնք ընկոյզի և կաղինի խոշորութիւն ունէին։ Գարիի, բակլայի, ոլոռնի արտերը, այգիները, նորաբողբոջ տունկերը, ծառերը, թթենիները մեծապէս վնասուեցան։ Ցորենի արտերն անվնաս մնացին, ըստ որում դեռ նոր բողբոջած էին ծիլերը։

ԳՈՂՈՒԹԻՒՆ.—Եգիպտոսէ Պէյրութ ղրկուած թղթատարական պայուսակէ մը գողցուեր է յանձնարարեալ նամակ մը որ 100 ոսկինոց պանքնոտ մը կ'պարունակէր։ Գողութիւնն երևան ելեր է Պէյրութ թղթատան մէջ, պայուսակին բացուած ժամանակ։ Կասկած չկայ որ գողութիւնը կատարուած է Եգիպտոսի մէջ։

ՍԵԼԱՆԻԿ—ՄԱՆԱՍՏԻՐ երկաթուղիի ընկերութիւնը, ինչպէս անցեալ տարի, այս տարի ևս 5 % շահաբաժին պիտի տայ։

ԻԶՄԻՐ.—Սկիւտար, Եէնի—Ճամի, սըրճարար Ատեմ, ցուպով գլխէն մահացու կերպով վիրաւորեց նոյն մզկիթին իմամ Աքիֆ էֆ.ն, և փախաւ։ Ոստիկանութիւնը ձերբակալեց ոճրագործը։ Աքիֆ էֆ.ի ստացած վէրքը շատ ծանր է և բժիշկներն ամէն յոյս կտրած են։

—Ֆենաքէճ գիւղացի (Մուղլէ) Թուֆի անուն կին մը անօրինակ վայրագութեամբ մը սպաններ է իր ապօրինի նորածին զաւակը, քարով մը ճզմելով անոր գլուխը։ Ձերբակալուեր են Թուֆի և մեղսակիցը, Տէրվիշօղլու Շիւքրի։

ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹԻՒՆ.— Եղեռնադատ Ատեանն ութամսեայ բանտարկութեան դատապարտեց կօշկակար Լևոնն որ անցեալ տարի Դեկտ. 5ին վիրաւորած էր ձկնորս Յակոբը։

Քրոնիկ Հայ Եկեղեցւոյ

Խառն Ժողովն իր երէկի նստին մէջ նկատելով որ միայն Գաւառական Ժողովի որոշումը չի բաւեր Առաջնորդը դադարեալ նկատելու, որոշեց քննիչ յանձնաժողով մը կազմել Ռոտոսդոյի Առաջնորդին դէմ եղած գանգատները քննելու և կարևորն առաջարկելու համար Ազգ. Վարչութեան։

—Գանձակի երկաթուղիի կայարանին մօտ ընդարձակ հողեր ունեցող Մահմէտ Միրաք օղլի անուն Պարսիկը, տեսնելով որ կայարանը քաղաքէն շատ հեռի է, և կայարանին մօտ հաստատուած Հայ ընտանիքներն եկեղեցի չունին, բաւական տարածութեամբ հող նուիրեր է, որպէս զի եկեղեցի մը և քահանայի բնակարան շինեն, որոյ շնորհիւ ուրիշներ ալ կրնան հաստատուիլ այն կողմ։ Գանձակի և Տփղիսի Հայերը շնորհակալութեան ուղերձներ ղրկեր են բարեսէր կալուածատէրին, որ թէ' իր շահերն և թէ իր դրացիներուն շահերն այնքան լաւ հասկցած է։

—Վոլկայի վրայ Զարիձին քաղաքին մէջ հաստատուած Սալմաստեցի Հայերը կազմեր են մարմին մը «Զօլա» անունով։ Բայց գործն առնչութիւն չունի գրականութեան կամ բնապաշտ վիպագրութեան հետ, ո՛չ իսկ Ֆրանսացի անուանի վիպասանին հետ, որովհետև Զօլա նաև Սալմաստի գետակին անունն է։ Ասիկա տնտեսական և գիւղատնտեսական ընկերութիւն մը պիտի ըլլայ, նպատակ ունենալով Սալմաստեցիներուն գործ հայթայթել իրենց երկրին մէջ, որպէս զի պանդխտութեան չելնեն. զի վստահ են որ ի մօտոյ Կովկասի երկաթուղին Պարսկաստան պիտի մտնէ, և Սալմաստ երկաթուղիի կայարան պիտի ունենայ, հետևապէս տեղւոյն աշխատասէր տարրերը կարող են իրենց գաւառին մէջ աշխատիլ և ապրուստ մը ճարել։ Հիմնադիր անդամներն հինգ հոգի են, չորսը Սալմաստեցի, մին Շուշեցի։

— Յունիսի առաջին շաբթուն մէջ, Կովկասի Պարսիկներուն Դենպետն Երևանէն Ս. Էջմիածին երթալով այցելեր է Ս. Հայրապետին։

—Պրն. Կ. Կոստանեանց, Ս. Էջմիածնի Գէորգեան Ճեմարանին տեսուչը, (որուն յաջորդեց Տ. Նահապետ վրդ.), տեսուչ ընտրուեցաւ Ալեքսանդրապոլի Առեւտրական Դպրոցին։ Ասիկա զուտ աշխարհային հաստատութիւն մ'է, զոր տեղւոյն Հայերն հիմնած և կառավարութեան հաստատել տուած են, և կ'կառավարեն իրենց մէջէն ընտրուած Հոգաբարձութեան մը ձեռամբ։

—Ուսումնական Խորհուրդն առաջարկած էր որ ուսուցչական վկայական ստանալու համար ներկայացող այրերը 21 իսկ կիները 18 տարին ամբողջացուցած ըլլան։ Խառն Ժողովն ընդունեց Խորհուրդին այս առաջարկութիւնը։

—Աբէնէ Մոճոյի վերջին թիւին մէջ կ'կարդանք. — «Նորակազմ Դատաստ. Խորհրդոյ արդէն ընտրուած անդամներուն վրայ աւելցած են Տ. Յակոբ քհ., Տ. Մկրտիչ քհ. Ասլանեան, Տեարք Խորէն Ֆրէնկեան և Սարգիս Մ. Պալապանեան։

«—Իզմիրի Թեմերէն Աքսարի Թաղ. Խորհրդոյ ընտրութիւնը կատարուած ըլլալով, Ազգ. Վարչութիւնը վաւերացուցած է այս ընտրութեան տեղեկագիրը։

«—Ելեմարից բարեգաման յանձնաժողովն իր հաշիւները մատուցած ըլլալով, Վարչութիւնն որոշած է այդ հաշիւները բանալու և քննելու համար իր առաջիկայ նիստին հրաւիրել յանձնաժողովոյ անդամներէն մէկ քանին։»

—Իզմիրէ կ'գրուի թէ, Կրօն. Ժողովոյ որոշմամբ, Ս. Մեսրոպեան վարժարանի ուսուցիչ Աստուածատուր Մանուկեան և Գարաժալի Տ. Աբրահամ քհյ.ի որդին քահանայ պիտի ձեռնադրուին Իզմիրի Ս. Ստեփաննոս եկեղեցիին վրայ։ Առաջինը նախկին շրջանաւարտներէն է Գէորգեան Ճեմարանին. գրած է կրօնագիտութեան դասագիրք մը։

—Պաշտօնական ծանուցում Ազգ. Ուսումնական Խորհրդոյ. — Կազմական կանոնագրին ԻԸ յօդուածով տրամադրեալ Աւարտական Քննութեանց հրահանգին համաձայն՝ Նախակրթարաններու ուսմանց՝ որք որոշուած են կանոնագրին Ժ. յօդուածով, քննութեանց հարցարանները ժամանակին պատրաստուած և ղրկուած են արդէն շրջանաւարտ ունեցող վարժարանաց Թաղական Խորհուրդներուն, որպէս զի հաղորդուին տեսչութեանց, ուսուցչաց և ուսանողաց, ինչպէս կ'տրամադրէ հրահանգին 2րդ յօդուածը։

Որովհետև քննութեանց համար կանոնադրեալ ժամանակը կ'մօտենայ, Ուսումնական Խորհուրդս որոշեց որ քննութիւններն սկսին ամսոյս 28 Գշ. օրէն, և հրահանգին 4 և 5րդ յօդուածներու տրամադրութեանց հետևողութեամբ պատրաստեց հետևեալ կարգացոյցն ու ժամանակացոյցը, մէկ քանի վարժարաններ իրարու միացնելով և քիչ թիւով շրջանաւարտ աշակերտներ ունեցողները յարմար կեդրոն մը փոխադրելով։

Անհասարիչ նոյն կարգացոյցն ու ժամանակացոյցը.

1. Գում—գաբուի Պէզճեան, Կէսիկ փաշայի Ս. Մեսրոպեան և Եէնի—գաբուի Առաքելոց—Հայկանուշեան վարժարանները միացուած, և կեդրոն որոշուած է Մայր վարժարանը։

2. Ս. Փրկչեան Ազգ. Որբանոցն և Մաքրի գիւղի Տատեան վարժարանը միացուած, և կեդրոն որոշուած է Մաքրիգիւղի վարժարանը։

3. Բերայի Էսաեան, Ղալաթիոյ Կեդր. Նախակրթարանն և Գուրուչէշմէի Ս. Թարգմանչաց վարժարանները միացուած և կեդրոն որոշուած է Էսաեան վարժարանը։

4. Իւսկիւտար Իճատիէի Ներսէս—Որմոնեան և Ս. Խաչի վարժարանները միացուած և կեդրոն որոշուած է Ս. Խաչ վարժարանը։

Քննութիւնները պիտի սկսին առաւօտները ժամ 2½ն (ը. թ.) և պիտի տևեն մինչև 5. իսկ կէս օրէ ետքը պիտի սկսին ժամ 6ին և տևեն մինչև 9։

Քննութիւնները որոշեալ կեդրոններուն մէջ միևնոյն օր պիտի կատարուին հետևեալ կարգաւ և օրերուն մէջ։

Յունիս 28, Գշ.—Կէս օրէ առաջ.—Կրօնք, Բարոյագիտութիւն.—Կէս օրէ վերջ.—Տնային Տնտեսութիւն (աղջկանց), Օրէնսագիտական և Տնտեսագիտական ծանօթութիւնք (մանչերու), Գծագրութիւն, Գեղագրութիւն։

Յուլիս 1, Ուրբ.—Կէս օրէ առաջ.—Հայերէն գրաբար և աշխարհաբար.—Կէս օրէ վերջ.—Հայերէն շարադրութիւն և Բացատրական ընթերցում։

Յուլիս 5, Գշ.—Կէս օրէ առաջ.—Օսմաներէն (թարգմանութիւն, ուղղագրութիւն, քերականութիւն, շարադրութիւն).—Կէս օրէ վերջ.—Պատմութիւն և Աշխարհագրութիւն։

Յուլիս 8, Ուրբ.—Կէս օրէ առաջ.—Ֆրանսերէն (թարգմանութիւն, ուղղագրութիւն, քերականութիւն, շարադրութիւն).—Կէս օրէ վերջ.—Երաժշտութիւն, Ձեռագործ և Ձևագիտութիւն (աղջկանց), Տոմարակալութիւն (մանչերու)։

Յուլիս 12, Գշ.—Կէս օրէ առաջ.—Թուաբանութիւն և Երկրաչափութիւն.—Կէս օրէ վերջ.—Բնական գիտութիւնք։

Եւ որովհետև քննութեանց հարցարանները լեզուներու մասին լոկ քերականական հարցումներ կ'պարունակեն, Խորհուրդս որոշած է որ անոնցմէ զատ աշակերտաց առաջարկուին շարադրութեան նիւթ մը, նոյնպէս գրաբարէ աշխարհաբար թարգմանութեան, քերականական լուծման համար Աւետարանէն հատուած մը տրուի աշակերտաց և Թուրքերէնէ ու Ֆրանսերէնէ հայերէն թարգմանութեան հատուածներ ու առաւելն տասն տող, որք ծառայեն նաև իբրև ուղղագրութեան փորձ։

Շարադրութեան նիւթերն և Թարգմանութեան հատուածները պիտի ընտրուին մասնախմբին կողմէ։ Գալով հայերէն աշխարհաբարի, այդ մասին ալ բացատրեալ ընթերցումի բերանացի քննութիւն ալ տեղի պիտի ունենայ։

Արդ, Քննիչ մասնախումբերու անդամներն որոշուած և ծանուցուած ըլլալով իրենց պաշտօնը, պիտի անդամակցին անոնց՝ ըստ տրամադրութեանց 6րդ յօդուածոյ հրահանգին, իւրաքանչիւր վարժարանի տեսուչն կամ Աւագ ուսուցիչը, և որք կ'հրաւիրուին նաև այս կարգադրութեանց համաձայն շարժիլ։ (Կնքէ.)

—Գոհունակութեամբ կ'իմանանք թէ Գեր. Տ. Ներսէս Մ. Վ. Դանիէլեանի քեռորդի Յակոբ էֆ. Թօքաթճեան՝ յաջողած է իր աւարտական քննութիւններն անցընել Պէյրութի ամերիկեան բժշկական վարժարանին մէջ, ի ներկայութեան կայս. կառավարութեան քննիչներուն, և ստացած է բժշկական վկայականը։

— ՅԱՒԱԶԻԿԱՑ ԿԻՐԱԿԻ, Յնս. 19, Ս. Եկեղեցւոյս տօնախմբութեանն առթիւ Ամեն. Տ. Մաղաքիա Ս. Պատրիարք Հայրն հանդերձեալ է հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցանել և հոգևորապէս մխիթարել բարեպաշտ ժողովուրդը։ Եկեղեցական ժամերգութիւնք պիտի սկսին առաւօտեան ժամ 11ին, Ս. Պատարագ՝ 1½ին։

Ս. Լուսաւորչի Եկեղեցւոյ Թաղականութեան

Վ. Ատենադպիր   Ատենապետ
Համբարձում Գօզալեան   Յ. Մոսկոֆեան

ԱՅՍՕՐՈՒԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՆԱՍԻՕՆԱԼԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

ՄԱՐՈՔԻ ԴԵՍՊԱՆԱԽՈՐՀՈՒՐԴԸ

ՖՐԱՆՍԱ ԵՒ ԱՆԳԼԻԱ Կ'ԸՆԴՈՒՆԻՆ

ԶՕՐ. ՔՈՒՐՈՒՓԱԴՔԻՆ

ԾԱՆՐ ԼՈՒՐԵՐ ՄԱՆՉՈՒՐԻԱՅԷՆ

ՓԱՐԻԶ, Յունիս 28.—Ի պատասխանի գերման ծանուցագրին, Վարչապետ Մ. Ռուվիէ ծանուցագիր մը յանձնեց Բարիզի գերման դեսպան Իշխան Ռատոլինի, ուր ըսուած է թէ Ֆրանս. կառավարութիւնը կ'ընդունի որ Մարոքի խնդիրը լուծելու համար դեսպանախորհուրդ գումարուի։—Կ'ըսուի թէ այս դեսպանախորհուրդին մէջ Ֆրանսայի պատուիրակները պիտի ըլլան Մ. Լէօն Պուրժուա, Ալժերիոյ նախկին կառավարիչ Մ. Ռեվուալ և Զօր. Ֆաժէն։—Ֆրանսական, գերման և անգլիական դեսպաններն հրաման ստացան իրենց կառավարութիւններէն, Ֆէսէ Դանժէր դառնալու։—Յոյս կայ որ դեսպանախորհուրդը մօտերս գումարուի։

ԼՈՆՏՐԱ, 28.—Մարոքի խնդրոյն առթիւ Ֆրանսայի և Գերմանիոյ միջև ծագած անհամաձայնութիւնը կարելի է հարթուած նկատել։

ԼՈՆՏՐԱ, 28.—Բարիզէ կ'հեռագրուի թէ Ֆրանսա, ի պատասխանի գերման դեսպան Իշխան Ռատոլինի յանձնած ծանուցագրին, կ'ընդունի Մարոքի խնդրոյն համար դեսպանախորհուրդ գումարել, ըստ որում Գերմանիա խոստում տուած է իր ծանուցագրին մէջ թէ պիտի ճանչնայ Մարոքի մէջ Ֆրանսայի մենաշնորհները։ Անգլիական կառավարութիւնը, հետևելով Ֆրանս. կառավարութեան ընթացքին, ինքն ալ ընդունեց դեսպանախորհուրդ գումարելու առաջարկը։ Հաստատուած է որ անգլ. Դահլիճը նախապէս խորհուրդ տուած էր Ֆրանսայի՝ մերժել դեսպանախորհուրդի առաջարկը։

ԼՈՆՏՐԱ, 28.—Լաֆան հեռագրական գործակալութիւնը լուր կուտայ որ Անգլիա դեռ չէ ընդունած դեսպանախորհուրդ գումարելու առաջարկը։

ՓԱՐԻԶ, 28.—Պաշտօնական աղբիւրէ լուր կ'տրուի թէ Գերմանիոյ ծանուցագիրը շատ հաշտարար ոգիով գրուած է, և Գերմանիա լուրջ երաշխաւորութիւններ տուած է որ պիտի ճանչնայ Ֆրանսայի մասնաւոր իրաւունքներն իբր Մարոքի սահմանակից Տէրութիւն։

ՓԱՐԻԶ, Յունիս 28.—Զօր. Նոկի պարտութեան մատնեց ռուս Ա. զօրաբանակը (հրամատար՝ Քուրոբադքին)։ Կ'ըսուի թէ Զօր. Քուրոբադքին մեռեր է ճակատամարտին մէջ։

ՊԵՏԵՐՍՊՈՒՐԿ, 28.—Դեռ ո և է լուր չէ ստացուած Ա. զօրաբանակին պարտութեան և Զօր. Քուրոբադքինի մահուան վրայ։

ԼՈՆՏՐԱ, 28.—Բազմաթիւ կռիւներ տեղի կ'ունենան Քորէայի հիւսիսակողմը։ Ճաբոնցիք շարունակ յարձակում կ'գործեն Ռուսերուն վրայ, և զանոնք ետ կ'մղեն։ Այս կերպով, քիչ ատենէն բնաւ ռուս պիտի չմնայ Քորէայի մէջ։ Թօքիոյէ կը հեռագրուի թէ Բշ. օր Քուանկ Բինկէ 15 մղոն հեռի դէպ հիւսիս՝ ի Շինկ—Շիա —Դանկ ռուս հետևակազօրաց հինգ գումարտակ տեսնուեցան՝ 6 թնդանօթով։ Ճաբոնցիք ի փախուստ դարձուցին զանոնք և գրաւեցին Եուս—Եանկը, հիւսիսային Քորէա։

ԹՕՔԻՕ, 28.—Շարունակ նոր զօրք կ'հասնի Մանչուրիա, և կ'ղրկուի Մարեշալ Օեամայի բանակին։ Ճաբոնցւոց պատրաստութիւններէն կ'երևի թէ վճռական ճակատամարտ պիտի մղեն։ Ճաբոնական կառավարութիւնն որոշեց զօրաւոր նաւատորմիղ մը ղրկել Պալթիկ, եթէ պատերազմն երկարի։

ԼՈՆՏՐԱ, 28.—Թօքիոյէ կ'հեռագրուի Ռէօյթէրի թէ Ճաբոնցիք գրաւեցին Եուս—Եանկը (Քորէա), Քիօնկ—Սօնկէ 11 մղոն հեռու դէպ ի հիւսիս, և անկէ կ'շարունակեն քալել Վլատիվոստոքի վրայ։

ՊԵՏԵՐՍՊՈՒՐԿ, 29.—Ռուս Ծովային պաշտօնատունն երեկ յայտարարութիւն մը հրատարակեց թէ Ծով. Նէպոկադով և անձնատուր մարտանաւերու բոլոր սպաները դատի պիտի քաշուին, երբ Ռուսիա դառնան։ Ասոնք պիտի դատուին ըստ Ռուս Ծովային Պատժ. Օրէնսգրքին 279րդ յօդուածին, որ կ'տրամադրէ պաշտօնէ արտաքսում, աստիճանազրկութիւն և կամ մահու պատիժ։

ՊԷԼԿՐԱՏ, 28.— Նշանաւոր ժողովրդական գրագէտ և քերթող Եանքօ Վէսելինովիչ մեռաւ, ծննդավայր քաղաքին, Կլակովիցայի մէջ, 43 տարեկան։

ՊԷԼԿՐԱՏ, 28.—Թուրքիոյ և Սերպիոյ միջև կնքուելիք առևտրական պայմանագրին վրայ բանակցութիւն կատարելու համար, սերպ պատուիրակներ որոշուեցան։ Պատուիրակ կարգուեցաւ Սերպ դեսպան Մ. Սիմիչ, Ելմտական Պաշտօնատան Ա. քարտուղար Մ. Սավա Գուքիչ, մաքսային բարձրաստիճան պաշտօնատար Մ. Տոշան Եոսինովիչ, որ գալ շաբթու Պոլիս պիտի մեկնին։

ԱԹԷՆՔ, 28.—Սաստիկ տաք կայ, անկարելի կ'ըլլայ փողոցներէն անցնիլ։ Բերքերը մեծապէս վնասուեցան։

ՊԵՏԵՐՍՊՈՒՐԿ, 28.—Կ'ըսուի թէ կոմս Ալեքսէյ Ներքին Գործոց նախարար պիտի կարգուի։

«Կ. ՊՈԼՍՈՅ» ԵՒ «ՖՈՒՌՆԻԷԻ»

ԹՕՔԻՕ), Յունիս 28 (Պաշտօնական).— Թշնամի հինգ գումարտակներ վեց թնդանօթով ամսոյս 26ին յարձակեցան մեր զօրաց վրայ ի Ծանկիէզին, Գուանկ-Բինկէ 12 մղոն հեռու դէպ հիւսիս արևելք, բայց ետ մղուեցան։ Նոյն օր մեր հեծելազօրքերը գրաւեցին Քուսօնկը, հիւսիսային Քորէայի մէջ, Այլոնկսօնկէ 10 մղոն հեռու դէպ հիւսիս։

ՊԵՏԵՐՍՊՈՒՐԿ, 28.—Այսօր սկսաւ պահեստի զօրաց ի զէն կոչումը, Պետերսպուրկի և շրջակայից մէջ։ Զօրահաւաքման գործողութիւնք երեք շաբաթ պիտի տևեն։ Ութսուն հազար հոգի դրօշի տակ պիտի կոչուի։

ՎԻԷՆՆԱ, 28.—Երեսփ. Ժողովն այսօր քննեց Գերմանիոյ հետ կնքուելիք առևտրական դաշնագիրը, և ղրկեց Մաքսային յանձնաժողովին։

ՔԻԼ, 28.—Պատերազմական գործոն նաւատորմին հրամատար և նաւային ընդհանուր քննիչ Ծովակալ Քէօսթէր Մեծ Ծովակալ անուանուեցաւ։

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

(ԼՈՒՐԵՐ ԱՅՍՕՐՈՒԱՆ ԹՂԹԱԲԵՐՈՎ. ՅՈՒՆԻՍ 27)

ՄԱՐՈՔԻ ԽՆԴԻՐԸ

ՊԵՐԼԻՆ, Յունիս 26.—Մարոքի խնդրոյն վրայ անթափանցելի լռութիւն մը կը տիրէ այժմ։ Թէ՛ Ֆրանս. ծանուցագրին պատասխանին և թէ Իշխան Պիւլովի և Մ. Ռիհուալի միջև երեկուան տեսակցութեան վրայ ստոյգ լուր չկայ։ Գերմանիոյ պատասխանագրին պարունակութեան մասին տարածուած լուրերն անհիմն ենթադրութիւններ են. բայց կ'երևի թէ խնդիրն իր լուծման շրջանին հասած է։

ՄԱՏՐԻՏ, Յունիս 26. — Հանրային կարծիքն ամենևին տրամադիր չերևիր Մարոքի խնդրոյն մէջ Ֆրանսայի և Անգլիոյ համար յանձնառութիւններ ընել և ընդհանուր կերպով կ'դատապարտէ նախկին նախարար Վիլլա—Ուրուդիաի ֆրանսասէր քաղաքականութիւնը։ Ամբողջ մամուլը կ'գովէ դեսպանախորհուրդ մը գումարելու գաղափարը։ Էլ Իմփարսիալ կ'գովէ Գերմանիոյ քաղաքականութիւնը և կը ձայնակցի Գերմանիոյ պահանջներուն։

ՊԵՐԼԻՆ, Յունիս 26. — Շիքակօյի Տէյլի Նիւզը կ'գրէ թէ նախագահ Ռուզվէլթ շատ կ'աշխատի Ֆրանսայի և Գերմանիոյ միջև յառաջ եկած ձգտումը մեղմացնելու, և այս առթիւ սիրալիրաբար խնդրեր է Անգլ. կառավարութենէն որպէս զի Ֆրանսական առաջարկներուն պաշտպանութեան մէջ չափաւորութիւնը ձեռքէ չթողու։ Մր. Ռուզվէլթ անգլ. Թերթերու մէկ մասին գրգռիչ լեզուին համար ալ դիտողութիւններ ըրեր է։

ԱՆԳԼԵՒՃԱՊՈՆԱԿԱՆ ԴԱՇՆԱԳՐԻՆ ՆՈՐՈԳՈՒՄԸ

ՊՐԻՒՍԷԼ, Յունիս 26.—Ճաբոնցի Աբրիզուկավա Իշխանը որ այսօր Լօնտօն կը հասնի և հիւր պիտի ըլլայ Էտուարտ Թագաւորին, երէկ քաղաքիս Տէյլի Մէյլի թղթակցին հետ տեսակցութեան մը պահուն ըսաւ թէ իր Լօնտօն ընելիք այցելութիւնը պաշտօնական հանգամանք ունի։ Իշխանը կ'յուսայ որ անգլեւճաբոնական դաշնագիրը նորոգուի մօտերս։

ՁԻՆԱԴԱԴԱՐ ՉԿԱՅ

ԼՈՆՏՐԱ, Յունիս 26.—Զինադադարի մը համար Ամերիկայի մէջ եղած ամէն ջանքերն ապարդիւն ելան, զի Ռուսիա կ'մերժէ թշնամութեանց դադարումը խնդրել Ճաբոնէ։ Ուաշինկթընի մէջ համոզուած են որ Ռուսիա յուսալով թէ Ճաբոնը պիտի սպառի, մտադիր է տարիներով շարունակել պատերազմը, և պատերազմական տուգանք չվճարել, և ռուս հող չտալ անոր։

«ՊԱԵԱՆ» ՅԱՂԹԱՆԱԿԸ

ԹՕՔԻՕ, Յնս. 24.— Բորդ Արթուրի ընդհանուր հրամատար Շիպաեամա ծովակալը պաշտօնապէս հաստատեց այն լուրը թէ Ռուսաց զրահակիր Ա. կարգի յածանաւը, Պաեան, ջուրին երեսն հանուած է նաւահանգստին մէջ ընկղմած տեղէն։

ՌՈՒՍԻԱ ԵՒ ԱՆԳԼԻԱ

ՍԻՆԿԱՊՈՒՐ.—Ռուս օժանդակ յածանաւը Թէրէք Յունիս 5ին ընկղմեց անգլ. Իփոն շոգենաւը, որ բրինձ և թղթատարական պայուսակներ կ'տանէր Ռանկունէն Եօքօհամա։ Թէրէք Հօնկ Քօնկէն 150 մղոն հեռի գտաւ յիշեալ շոգենաւն և վեց ժամ զբաղեցաւ ընկղմելու, հանելէն ետքը նաւաստիներն ու նաւապետը։

ՃԻՊՈՒԹԻ.—Տնէբէր ռուս օժանդակ յածանաւն որ ընկղմեց Սէնթ Քիլտա անգլ. շոգենաւը, հասաւ Ճիպութի, ուր Անգլիացիք իրեն պիտի հաղորդեն Զարին հրամանը։

ՖՐԱՆՍԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒՆ ՃԱՌԵՐԸ

ՓԱՐԻԶ, Յունիս 26. — Պատերազմական նախարար Մ. Պէրդօ այսօր զօրավար Հօշի յիշատակին տեղի ունեցած հանդէսին առթիւ, Վէրսայլի մէջ ճառ մը խօսելով ըսաւ թէ չուզեր խօսիլ ներկայ կացութեան հաւանական հետևանքներուն վրայ։ Բայց կրնայ հարցնել թէ ընդհանուրին վախ և տենդոտութիւն պատճառելը, անվստահութիւն թելադրելը յանցապարտ գործ մը չէ՞։ Բայց 35 տարիէ ի վեր եղած ջանքերուն շնորհիւ մեր ռազմային կազմածքները գերազանց են. մեր պաշարը լեցուն ու առատ է, մեր սպաներն ալ կրնան բաղդատութեան մտնել ամբողջ աշխարհի սպաներուն հետ. Ֆրանսա յառաջդիմութեան շահուն կ'գործէ և ընդհանուր խաղաղութեան և եղբայրակցութեան զգացումներուն կ'անսայ։

ԴՐՈՒԱ, Յունիս 26. — Ներքին գործոց նախարար Մ. Էդիէն երեկ ճառ մը խօսելով ըսաւ թէ Ֆրանսա մասնաւոր առարկայ եղած է նախանձի։ Բայց մեք պիտի պահպանենք անոր մեծ անունը, խոհեմութեան ապացոյցը տալով աշխարհի։ Մեք պիտի պաշտպանենք Ֆրանսայի ճակատագիրը, իրագործելով իր արդարութեան գաղափարականը. պիտի զօրացնենք անոր նիւթական կեանքը, մեր սիրած ու յարգած բանակին պաշտպանութեան տակ պահելով զայն։

ԱՆԳԼԻԱ

ԼՕՆՏՕՆ, Յունիս 26.—Էտուարտ Թագաւորն հինգ երևելի անձնաւորութիւններ ընտրեց իբր անդամ, Հարաւ—Ափրիկեան պատերազմէն ետք, բանակին պաշարները ծախսելու գործին մէջ տեղի ունեցած զեղծումները քննելու պաշտօն ունեցող յանձնաժողովին։

ԼՕՆՏՕՆ, Յունիս 26.—Մր. Մաք Արթուր հարցուց Դահլիճին թէ ինչ եղաւ ռուս յածանաւերուն կողմէ ընկղմած ու գրաւուած անգլիական նաւերուն գործը։—Մր. Կիպսըն Պօուլէս հարցուց նոյնպէս թէ ի՞նչ եղաւ Նայթ Քօմնէրի խնդիրը։— Վարչապետ Մր. Պալֆուր պատասխանեց թէ տարակոյս չունի որ ասոնց համար գոհացում պիտի տրուի։ Ուրախ է Ժողովին յայտնել կարենալուն համար թէ Անգլիացիք լաւագոյն պատճառներ ունին հաւատալու որ ռուս կառավարութիւնը շատ դժգոհ է ռուս յածանաւերուն այս ընթացքէն, և Տնիէբէրէն մինչև Ճիպութի հրամաններ ղրկած է, որք անկարելի պիտի ընեն այլևս միջազգային օրինաց դէմ այդօրինակ արարքներ։

*** Մր. Ռօպէրդ Ռայթ, ի դիմաց ընդդիմադիր կուսակցութեան, առաջարկեց որ Դահլիճը պարսաւանաց քուէ տայ Հարաւային Ափրիկէի բանակին հայթայթումներուն մէջ գործուած զեղծումներուն համար։ Ըսաւ թէ չուզեր հաւատալ որ Դահլիճը լռութեամբ հանդուրժէ այս զեղծումներուն։ Եթէ նախարարք իրենց պարտաւորութիւնները կատարած ըլլային, այդ զեղծումները տեղի չէին ունենար։

Հնդկաստանի նախարար Մր. Պրոտրիք որ Հարաւ—Ափրիկեան բանակին հայթայթմանց պայմանագիրներուն կնքուած ատեն պատերազմական նախարար էր, խօսելով հերքեց թէ նախարարաց անհոգութեան հետևանքով յառաջ եկած են այդ զեղծումները։ Հայթայթմանց պայմաններուն պատճառաւ յառաջ եկած վնասը շատ չափազանցուած է։ Նախարարք լռելու պատճառ չունին, և ինք համոզուած է որ քննիչ յանձնաժողովն որչափ մանրամասնօրէն կատարէ իր քննութիւնները, այնչափ մեծ պիտի ըլլայ ընդհանուրին գոհունակութիւնը, և սուտ թէ՛ պատերազմական պաշտօնատան և թէ ասոր հետ առնչութիւն ունեցող պաշտօնէութեանց պատիւն ու կարողութիւնը պիտի բարձրանայ։

ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹԻՒՆՔ ՀԱՐԱՒ. ՏԻՐՕԼԻ ՄԷՋ

ՀՌՈՄ, Յունիս 26.— Բօփէլօ Տէլլա Սէրա կ'իմանայ թէ Դրէնթոյի մէջ փութոյ անդութեամբ կ'շարունակուին զինուորական պատրաստութիւնք. նոր զէնքեր կը տրուին պահեստի զօրքերուն, և ամբողջ սահմանագլխին երկայնութեամբ ռազմամթերքի կայաններն ոստիկան—զօրաց պահպանութեամբ հսկողութեան տակ դրուած են։ Նոնսթալի մէջ մեծ ռազմափորձեր պիտի կատարուին, որուն ներկայ պիտի գտնուի, կ'ըսեն, Ֆրանց Եօզէֆ կայսրը։ Իտալի զեկոյց մը կ'հրատարակէ, որուն մէջ ըսուած է թէ Աւստրիա իր հողին վրայ ի գործ կ'դնէ ինչ որ ուրիշ տէրութիւն մ'ալ զայն պիտի ընէր իր շահուն համար։ Այսպէս, հարաւային Տիրօլի մէջ իր պահեստի զօրքերը կազմակերպելը տարօրինակ բան մը չէ։ Իր հրետանիներուն յաւելումն ալ այսպէս է։ Տարակոյս չկայ որ Աւստրիոյ—Հունգարիոյ փայթեառնէն սպառազինութեանց վրայ տարածուած լուրերը չափազանցուած են. բայց կ'մոլորեցնեն հանրային կարծիքն և կը խանգարեն երկու դրացի տէրութեանց Իտալիոյ և Աւստրիոյ—Հունգարիոյ լաւագոյն յարաբերութիւնները։ Փափաքելի է որ Բօփէլօ Տէլլա Սէրա ուրիշ անգամ այսպիսի լուրերու հրատարակութեան ատեն աւելի զգուշաւոր ըլլայ։

(Pester Lloyd, Յնս. 27, Գշ.)

ՍԵՂԱՆԱՒՈՐԱԿԱՆ

ՍԱԿԱՐԱՆ ՂԱԼԱԹԻՈՅ

ՓԱԿՈՒՄ

Օսմանեան Միացեալ	Օ. Ո.	95 32½
Ամէնէն բարձր գին	»	95 37
Ամէնէն վար գին	»	95 25
Ռումէլիի Երկաթուղի	Ֆր.	130 50
Ամէնէն բարձր գին	»	130 50
Ամէնէն վար գին	»	130 12½
Թումպագ	»	85 —

ԲԱՑՈՒՄ, 16 Յունիս

Օսմանեան Միացեալ	Օ. Ո.	96 —
» » ժամ 4ին		96 ½
Ռումէլիի Երկաթուղի	Ֆր.	130 62½
» » ժամ 4ին		131 —
Ռէժիի բաժնեթուղթ	»	17 12
Եգիպտ.-Քրէտի Ֆոնսիէ Ա.	Ֆր.	309 50
» » » Բ.		269 —
Բարսի Կ. Պոլսոյ	»	513 —
Անատոլուի երկթ. պրթ.	»	526 —
» » բժնթ.	Ա. Ո.	14 75
Օսմ. Ապահովագր. Ընկ.	Գ. Կ.	4 —
Թրամվէյ բաժնեթուղթ	ղր.	750 —
» ժուիսանս	»	265 —
» պարտաթուղթ	Ֆր.	482 —
Տէրքոսի ջուրի Ընկ.	»	246 —
Գալիպ Քարտաշերն	»	660 —
Գանք տը Սալոնիք	»	188 —
Թումպագ	»	85 —
Հելլենական 5 % 1881	»	262 —
Հելլենիկ. պարգևատոմս Թուղթ	Ֆր.	436 —
» նոր »	Բ. Օ. Ո.	3 95
Բաժնեթուղթ Լաւրիոնի	»	38 —
Գազատուն		105 —
Բարսի Իզմիրի	»	585 —
Շիրքէթի Խայրիէ	Օ. Ո.	30 —
Թէմմէքէիրի բաժնեթուղթ Ա.	»	27 —
» » Բ.	»	13 —
» պարտաթուղթ	»	490 —

ՈՍԿԻԼԱՆՑ

Օսմ. Մէջիտ. 1 օրուան	Օ. Ո.	2.75	2.25
» » 8 »	»	6 —	—

Ռումէլիի Երկթղ. Ֆր. 1.50

ՕՍՄ. ՊԱՆՔԱՅԻ ՓՈԽԱՆԱԿԱԳՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԸ

	ՎԱՃԱՌՈՒՄ	ԳՆՈՒՄ
Լոնտոն 3 ամիս	110 25	109 30
» չէք	110 10	109 30
Բարիզ 3 ամիս	22 71¼	22 91¼
» չէք	22 81¼	22 91¼
Պերլին մարք	18 56	18 66
Վիեննա քուրոն	21 82	21 92

ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄՈՑ

Անգլիական ոսկի	ղր.	109 35
20 ֆրանքնոց	»	87 15
20 մարքնոց	»	107 —
Բոլ Իմփէրիալ	»	80 —
Քրիմից	»	51 05
Մէճիտիյէ արծաթ	»	108 —
Պեշլիք	»	104 30
Նոր մէթելիք	»	103 10
Ռուպլ թղթադրամ	»	8 64

Անտէ Ա. Անդրէասեան, Ղալաթիա

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՍԱԿԱՐԱՆՔ

ԼՈՆՏՕՆ, Յունիս 28

Օսմանեան Միացեալ բաց.		Ա. Ո.	87 25
» » փակ.		»	87 25
Օսմ. Կայս. Պանքա		»	14 12
Եգիպտական Միացեալ		»	105 —
Անգլ. Քօնսօլիտէ		»	90 12
Պալկար. փոխառութ.	1892	»	100 50
Հելլենական Ռանդ	1881	»	41 75
» Մոնոպոլ		»	53 75
Փոխառ. Բարիզի վրայ		»	25 300
Թումպագ		»	3 37
Ճաբոնական 4 %		»	88 75
Ռուսական			89 50
Դրամազեղչ		»	2 ½

ՓԱՐԻԶ, Յունիս 28

Օսմանեան Միացեալ բաց.		88 40
» » փակ.		88 45
Ռումէլիի Երկաթուղի	Ֆր.	132 25
Օսմ. Կայս. Պանքա	»	608 —
Ռէժիի բաժնեթուղթ	»	393 —
Օսմ. Մաքս. Նոր փոխառ. 4%	»	482 —
Ֆրանս. Ռանդ 3 %	»	98 72
Քաղաք Լիոնէ	»	1103 —
Գանք տը Բարի	»	1402 —
Ռուսական		89 —
Թումպագ		86 —
Փոխառութիւն Պաւարիա 1894	»	490 —
Սպանիական արտաքին	»	91 07
Իտալական Ռանդ	»	106 40
Չէք Լոնտոնի վրայ	»	25 150
Դրամազեղչ Ֆրանս. Պանքայի		3 —

ՊԵՐԼԻՆ, Յունիս 28

Օսմ. Միացեալ		88 —
Ճինարթի փոխառութիւն 1903		87 80
Անատոլուի Երկ. պարտաթ. մարք		103 70
» » բաժնեթ. 60%	»	110 70
Ռուսական 4 %	»	88 70
Ռումէլիի Երկաթուղի	»	134 50
Փոխ. Լոնտոնի վրայ 3 ամս.	»	20 355
Դրամազեղչ		3 —

ՎԻԷՆՆԱ, Յունիս 28

Փոխան. Բարիզի վրայ	քուրոն	95 67
» Լոնտոնի վրայ	»	240 40
Ռումէլիի Երկաթուղի	»	141 25
Օսմ. Ռէժի	»	363 —
Դրամազեղչ		3 —

ՓԱՐՈՍ
ՔՕՆԵԱՔ
ՆԻՔ. ՑՈՒՔԼՈՍ
Ղալաթիա, Մոմհանէ փողոց, Թիւ 81

Կ'ուզէ՞ք առողջ ըլլալ։ Ն. Ցուքլոսի քօնեաքը միայն խմեցէք, որ խաղողի զուտ օղիէ շինուած է։ Խաղողի օղիէ եւ մշկահոտ գինիէ շինուած Ն. Ցուքլոսի քօնեաքը իր ոսկեգոյնին, հիանալի համին, և ուժառու յատկութեանց տեսակէտով, բոլոր միւս քօնեաքներէն գերազանց է։ Այս քօնեաքը կ'յանձնարարէ ջերմապէս Ս. Տարրաբան Տոքդ. Ժ. Մաննի, անդամ Առողջապահական Խորհրդոյ, Լն.։ Ահա՛ թէ ի՛նչ կ'ըսէ Տոքդ. Մաննի իր տեղեկագրին մէջ։ Տէյեկքեէր, Թիւ 10093.—

«Ստորագրեալս, հրաւիրուած ըլլալով ալքոլի վաճառական և Մանկասարի (Մնի Շէհիր) մէջ գործարանատէր, Թիւ 114—116, Մ. Ն. Ցուքլոսի կողմէ, այցելեց իր ալքոլի վաճառատունն և գործարանը, հիմնուած 1870ին, ինչպէս նաև Ղալաթիա, Մոմհանէ փողոց, Քրասոսքալա, Թիւ 6, գտնուած օղիի գործարանը։ Բոլոր այս հաստատութիւնները մանրամասնաբար աչքէ անցընելէ վերջ պատահաբար մէկ քանի շիշ գինի առի, որ օղի լինելու պիտի գործածուէին, ինչպէս նաև մէկ քանի նմոյշ առի օղիներէն, որ շէշերու կամ տակառներու մէջ դրուած էին։

Այս մէկ քանի օրինակներն յատկապէս կնիքիս տակ պահեցի։ Խաղողի այս օղիներուն շինութեան ծառայող Սամսոնի գինիներն և Ատտիկէի օղիներն հիանալի և գերազանց գտայ։ Ֆիզիքական և գործարանական յատկութիւններն ուսումնասիրելէ վերջ, յիշեալ Գործարանին օղիները տարրաբանական քննութեան ենթարկեցի։ Այս օղիները շատ յստակ տեսք և հեղուկ (fluide) կազմութիւն և շատ հաճելի համ և բոյր ունին. բէուգէտը թեթևապէս ...ւէ է, գոյնը սատափի դեղին, իսկ տեսակարար ծանրութիւնը 0,950—0,940—15° Ս.։ Եռացման կէտն է 84° Ս., Պօմէ աստիճան 18°։

Սալէրոնի գործիքով հանուած ալքոլը բնաւ չունէր ...ալքոլներու և ...ներու, ..., ...ներու յատկութիւնները։ Այս օղիներէն 100 մաս 1,75—1,85 մրուր տուին։ Ահա՛ կազմութիւնը.—

Խաղողի Էթիլ+ ալքոլ	42.70
Ջուր	55.46
Գործարանաւոր և հանքային հաստատուն մարմինք	01.81
Հոտաւէտ մարմինք	00.03
	100.00

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Այս տեղեկագրին առարկայ խաղողի օղիները կ'համապատասխանեն արուեստին և առողջապահութեան բոլոր պահանջներուն և բնաւ վար չեն մնար Ֆրանսայի քօնեաքներէն։ ՏՈՔԴ. Ժ. ՄԱՆՆԻ

9—2 Առողջ. Տեսչ.

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆՈՐԹՀ ԲՐԻԹԻՇ ԷՆՏ ՄԵՐՔԸՆԹԱՅԼ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Անգլ. Ոսկի 3,000,000 ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ 16,898,650
ՀԱՍՈՅԹ 1903 ՏԱՐԻՈՅ 3,550,873

ՆՈՐԹՀԸՐՆ ԷՑՈՒՐԸՆՍ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Անգլ. Ոսկի 3,000,000 ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ 6,523,504
ՀԱՍՈՅԹ 1903 ՏԱՐԻՈՅ 1,515,600

Ընկերութիւնքս իրենց ունեցած հսկայ դրամագլուխ, անգլիական պահեստի գումար ու եկամուտներով ապահովողաց բացարձակ վստահութիւն կ'ընծայեն և իրենց միացեալ Կ. Պոլսոյ Ընդհ. Գործակալութեան միջոցաւ կ'ստանձնեն հրդեհի դէմ ամենադիւրին ապահովութիւններ չէնքերու, կարասեաց, ապրանաց եւն.ի վրայ ԽԻՍՏ ԴԻՒՐԱՄԱՏՉԵԼԻ ԳՆՈՎ ԵՒ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ, թէ՛ մայրաքաղաքիս եւ թէ գաւառներէն ու քաղաքաց մէջ։
ՎՆԱՍՈՒՑ ՎՃԱՐՄՈՒՆՔ ԱՄԵՆԱՅՆ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՄԲ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԵՒ ԱՌԱՏԱՁԵՌՆՕՐԷՆ ԿԿԱՏԱՐՈՒԻՆ, որոյ ապացոյց մինչեւ այժմ միայն հրդեհի վնասուց համար վճարուած գումարը՝ 41,000,000 անգլ. Ոսկին կ'անցնի։

ԾՈՎԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
«ՄԱՐԻԹԱՅՄ»

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Անգլ. Ոսկի 500,000 ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ Անգլ. Ոսկի 100,000

Ընկերութիւնը շոգենաւուց և առագաստանաւուց մէջ բեռցուած ապրանքներն ու դրամածրարներն, ինչպէս նաև ամենայն թղթատարով ուղարկուած ինչքերը խիստ չափաւոր և օգտակար պայմաններով կ'ապահովագրէ։
Ցարգոյ հասարակութիւնն կ'հրաւիրուի իրենց անձնական շահուց պաշտպանութեան համար դիմել առ ԸՆԴՀ. ԳՈՐԾԱԿԱԼ ԳԱՌՆԻԿ Յ. ՄԵՐՈՒԲԵԱՆ, Կալաթիա, Մէհմէտ Ալի Փաշա Խան։ 50—10
ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՍ ԵՒ ԳԱՒԱՌԱՑԻՆ ԿԱՐԵՒՈՐ ԿԵԴՐՈՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ ԱԶԴԵՑԻԿ ԳՈՐԾԱԿԱՏԱՐՆԵՐ ԿԸ ՓՆՏՌՈՒԻՆ

ՕՍՄ. ԿԱՅՍ. ՊԱՆՔԱ

ԱԶԴ. — Մաքսային 5% փոխառութեան Օսմ. պարտաթուղթերու տէրերուն կ'ծանուցուի թէ այս արժէթուղթերուն՝ պայմանաժամը 1899 Յուլիսին աւարտած թիւ 26 կտրօնները եթէ մինչեւ 30 Յունիս /13 Յուլիս չներկայացուին վճարուելու համար, չեղեալ պիտի նկատուին։
⁂ 1896 5% փոխառութեան Օսմ. պարտաթուղթի տէրերուն կ'ծանուցուի թէ այդ արժեթուղթերու պայմանաժամը 1899 Յուլիսին աւարտած թիւ 6 կտրօնները եթէ մինչեւ 30 Յունիս/13 Յուլիս չներկայացուին վճարուելու համար, չեղեալ պիտի նկատուին 6—5

ԽԱԶԻՆԷԻ ԽԱՍՍԱԻ ՇԱՀԱՆԷ

Խազինէի Խասսաի Շահանէճէ միւպայեա օլունաճագ չաիրին մահ հալ բումինին 18ինճի ճումա իրթէսի կիւնի իհալէի էվվէլիէսի վէ գէյթուն եաղընըն պէհէր աթիգ գըեէսի մէճիտի 20 ղուրուշ հիսապը իլէ 5 ղուրուշ ֆիյաթ իլէ թալիպի ճօհ օէսինտէ օլուպ մահը հալ բումինին 15ինճի չիհարշէնպիհ կիւնիւնէ գատար 100 տէ 3 թէնզիլի պիլ գապուլ եէվմը մէզքիւրտէ իհալէի գաթիյէսի իճրա գըլընաճաղընտան իթայա թալիպ օլանլարըն թէէմինաթ ագչէսինի վէ եա միւթէպէր քէֆալէթնամէի միւսթասհըպէն եէվմը մէզքիւրտէ նիհալէթ սաաթ օնա գատար Խազինէի ճէլիլէի միւշարիլէյհայա կէլմէլէրի։
11 Հազիրան 321 3—3
⁂ Խազինէի Խասսաի Շահանէճէ միւպայեա օլունաճագ իքի ճրնօ ամէրիգան իլէ քիրփաս վէ Թրեէօթէ չէքէրի վէ ըսբարմաչէթ մոմը իլէ թիրէլի չուգա մէվգըի միւնագասայա վազ օլունաճաղընտան իթայա թալիպ օլանլարըն թէէմինաթ ագչէսինի վէ եա միւթէպէր քէֆալէթնամէի միւսթասհըպէն Խազինէի ճէլիլէի միւշարիլէյհայա կէլմէլէրի։
13 Հազիրան 321 3-2

AU LION D'OR
ՈՍԿԻ ԱՌԻՒԾ

Բերա, Մեծ Փողոց, Թիւ 314, Au Lion d'or (Ոսկի Առիւծ) վաճառատան վաճառանիշը և անունը վաւերացած է ձեռնհաս պաշտօնատանց կողմէ. ուստի կ'ծանուցանենք որ Օսմ. երկիրներու ո՛չ մէկ կողմը մասնաճիւղ ունինք, և մեր վաճառանիշն ու անունը կեղծողներն ըստ օրինի պիտի պատժուին։
ԵՐԱՍԻՄՈՍ ԱՐԾՈՒԴՕԼԻՏԻՍ
Բերա, Մայիս 10, 905 20—5

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՁԷԹԻ ԵՒ ՕՃԱՌԻ
Տ. ԲԱՐԱՄՔԷՔԵԱՅԻՏԷՍ
Բէյօղլու Մէյէթ Խան, Թիւ 60

Անխարդախ ձէթ և օճառ գնել փափաքողները, պէտք է այս վաճառատանը դիմեն. յիշեալ վաճառատունն արտադրող կեդրոններուն հետ ուղղակի յարաբերութիւն ունենալով, յանձնարարութիւններ կ'ստանձնէ ուզուած քանակութեամբ ձէթի և օճառի համար, որոց ամէնէն ընտիր տեսակէն ըլլալը կ'հաստատէ։
Ապրանքներուն բնակարան յանձնումը վաճառատան կողմէ կ'կատարուի ձրիաբար՝ 150 ղուռուշէ վեր գնումներ ընողներուն։ Այն ապրանքները, որոցմէ գոհ չեն մնար գնողները, ետ կ'առնուին փոխարժէքը վճարուելով։
Գիները վերջնական են և անփոփոխ

Առաջնակարգ ձէթ Այվալըքի	Օխան	7
Էտրէմիտ և Միտիլլիի ձէթ	»	6
Օճառ Կիրիտի	»	3¾
Այվալըք և Միտիլլիի օճառ	»	3½
Միտիլլի Բ. տեսակ օճառ	»	3¼

Մասնաւոր զեղչ եկեղեցիներու, դպրոցներու, հիւանդանոցներու և ուրիշ մարդասիրական հաստատութեանց համար եղած գնումներուն։
Ծանօթութիւն.—Հարիւր ոսկիի վարձատրութիւն մը պիտի տրուի այն անձին, որ հաստատէ թէ այս վաճառատան կողմէ ծախուած ապրանքներուն մէջ օտար եւ վնասակար նիւթեր կ'գտնուին։ 33

ԴԵՂԱՐԱՆ ԵՒ ԴԱՐՄԱՆԱՏՈՒՆ
ԿԱՐԱՊԵՏ Ս. ՊԵՐՊԵՐԵԱՆ
Կէտիկ—Փաշայի [illegible]

Պերպերեան դեղարանը, որ ծանօթ է իր դեղերուն թարմութեամբ և խղճամիտ պատրաստութեամբ և գիներու չափաւորութեամբ, ի դիւրութիւն հանրութեան, դեղարանին կից դարմանատուն մը հաստատած է, և ուր ամէն օր կ'այցելեն ծանօթ Տոքթօրներ, և հիւանդները կ'խնամուին վերջին ծայր խնամքով։ Դարմանատունը չորեքշաբթի ժամ 8—10 կ'այցելէ և ձրիաբար կ'դարմանէ ծանօթ մանկաբարձ և օրէօաթէօռ Տոքթոր Ճէվահիրճեան էֆէնտի, որուն այս ճիւղերուն մէջ ունեցած ձեռնհասութիւնն ու փորձառութիւնն հանրածանօթ են։ Ուրբաթ օր ալ առաւօտէն մինչեւ կէս օր ձրիաբար կ'դարմանուին կարօտ հիւանդներու ամէն ներքին հիւանդութիւնները։ Կ'դարմանուին նաև ծննդական, վեներական ախտերը։ Հիւանդներու մէջերն ալ կ'տարրալուծուին ճշտութեամբ։ 10—8


ՀԱՅՏԸՆ ԵՂԲԱՐՔ
ԲԵՐԱ ՄԵԾ—ՓՈՂՈՑ Nº 479

Հասած են ամառուան տաքերուն յատուկ բարակ պըտէ մուսլին, պաթիսգ, տօք, բիքէ, չրջազգեստցու և պլուզցու։

Մուսլին, ևարտան	2½ — 12	Ղրուշ
Բիքէ, ևարտան	6 — 12	»
Հովանոց	18 — 216	»


Ասկից զատ հասած են նաեւ ծովու բաղնիքի յատուկ սրբիչ, պէւրնուզ, ևլն. կան նաև միջատարգել թիւլեր, քթան ծածկոյթներ, և ամէն տեսակ ապրանքներ գիմացկուն և աժան։
Մասնաճիւղ Ղալաթիա, Վօյվօտա, Թիւ 87, ուր կ'ծախուին պատրաստ և չափի վերայ շապիկներ, զէֆիրէ ու քթանէ այլ և այլ տեսակ ապրանքներ։ 8—1

ՆՈՒՐԻԻ ԳԻՆԻ



(Նոս եւ Փամիլ)
ՈՅԺ ՏԱԼՈՒ ԵՒ ԱՐԻՒՆԸ ՄԱՔՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ
ԿԸ ԴԱՐՄԱՆԷ
ՏԺԳՈՒՆՈՒԹԻՒՆԸ [illegible]
ԱՆԱՐԻՒՆՈՒԹԻՒՆԸ [illegible]
ԿՐԾՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ՆՈՒՐԻԻ ԳԻՆԻՆ խիստ հաղթահած է և ՁԱՆ ԻԻԴԻ տեղ գործածուելով անոր կրկնապատիկ [illegible] կ'ըլլայ։
[illegible] 40—25

ԶՈՒՏ ԽԱՂՈՂԻ ՔՈՆԵԱՔ
Ն. Ժ. ՑՈՒԽԼՈՍ



ՔՈՆԵԱՔ
Ն. Ժ. ՑՈՒԽԼՈՍ
Կ'ուզէ՞ք առողջ ապրիլ, Դիմեցէք ՆԻԿՕԼԱ Ժ. ՑՈՒԽԼՈՍԻ քոնեաքի, որ շինուած է հելլենական խաղողի օղիէ և Սամոսի անուշահոտ գինիէ։ Անխարդախ կ'ծախուի գլխաւոր կեդրոնատեղին, Ղալաթիա, Մոմհանէ փողոց, Nº 81։
30—7

ՊԱՅՄԱՆՔ «ԲԻՒԶԱՆԴԻՈՆ»Ի

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ	6	Մէճ.
ՎԵՑԱՄՍԵԱՅ »	3	»
ԵՌԱՄՍԵԱՅ »	1½	»
ՏԱՐԵԿԱՆ » ՀԱՍՏ ԹՈՒՂԹԻ ՎՐԱՅ	7	»
ՁԵՌՔԷ ԳՆՈՂՆԵՐՈՒՆ	20	փր.
ԱՄՍԱԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ ՔՕՍԴ—ԼՕՔԱԼՈՎ	12	Ղշ.
ՏԱՐԵԿԱՆ » » »	7	Մէճ.
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ	26	ֆր.
» ՎԵՑԱՄՍ. 13, ԵՌԱՄՍ.	9	»
» ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍՏ ԹՈՒՂԹՈՎ և ամենօրեայ Բղիթադրով	40	»

Օսմ. մէճ. 108 ղրշ.— Անգլ. լիրան 119 ղրշ.—20 ֆր.նոցը 94½ ղրշ. են
Ի՛ Բէյրութ 55 ղրշ.են փոխ կ'ընդունուի
Նոյն պայմանով Կ. Պոլսոյ և Գաւառի համար
ԱՆԺՏԻՐ։ ՄԻՇՏ ԿԱՆԽԻԿ
Նամակի փուլ կ'ընդունինք՝ 20 հատ 1 ղրշ.նոց բօսդայի փուլը 20 ղրշ.ի հաշուով, և մի՛միայն ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿՈՎ։
Հասցէի փոփոխման համար անհրաժեշտ է ղրկել երկու ղրշ., նամակի փուլով։
Բօսդայի ծախքը մեր վրայ է, Բօսդ—Լօքալէն զատ։ Իսկ դրամին առաքման ծախքն և ամբողջ տարբերութիւնն առաքողին վրայ են։
Ձեռքերուն և Փոխ" գրերուն վրայ, պէտք է որ առաքողն ինք փակցուցած ըլլայ 20 փարայի օրինական դրոշմը։ Ապա թէ ո՛չ՝ երեք թերթ պակաս կ'ղրկուի։
Նմանապէս, մայրաքաղաքէն կամ գաւառէն ղրկուած Ազդերը պէտք է դրոշմուած ըլլան ըստ օրինի։ Ապա թէ ո՛չ չեն տպուիր։ Եկեղեցական ու բարեգործական Ծանուցումները զերծ են դրոշմի տուրքէն։
Պոլսոյ և գաւառի մէջ, ա՛յն վճարումները միայն վաւերական են որք կ'ըլլան ի ձեռնարկէն Տպարանին պաշտօնական թղթեր, ստորագրուած Տնօրէնէն, ու կնքուած Լրագրին սեփական կնիքովը։
Գաւառ թերթ կ'ղրկուի ամէն անոնց որ վերջոյ գրեալէն առաջ հաշուած ըլլան իրենց ղրկած գրամները։
Բաժանորդ գրուելու և գրամը ղրկելու ամէնէն դիւրին կերպն է՝ մանդատ—բօսդ մը առնել, որուն բոլոր ծախքն է 20 փարա մինչեւ 100 ղրշ.։ Նամակ գրելու պէտք չկայ։ Բաւ է մանդատ—բօսդին կտրօնին ետին՝ նշանակել բաժանորդին անունը, հասցէն, թուականն ու գումարը։ Դրամը մեզ կը հասնի, և թերթը կ'ղրկուի, անվրէպ։
Ապառիկ յանձնարարութիւնք ՉԵՆ ԳՈՐԾԱԴՐՈՒԻՐ։ Զնորոգուած բաժանորդութիւնք ՕՐՆ ՕՐԻՆ կ'դադրին, ծանօթ թէ անծանօթ, որ՛ ալ պատկանին։
Գաւառացի բաժանորդները լաւ կ'ընեն ուրեմն եթէ կանխաւ հասցնեն բաժնեգինը, կամ Կ. Պոլսոյ մէջ մէկը ցոյց տան որուն դիմուի պայմանաժամին։
Գործակալք պատասխանատու են իրենց ներկայացուցած բաժանորդներուն համար։ Ցորչափ դադրեցնել չեն տուած թերթին առաքումը, բաժնեգինը պայմանաժամին իրենցմէ կ'պահանջուի։
Հին թիւերը սովորական գնով չեն ծախուիր։
Զետեղուած ձեռագիրներն ետ չեն տրուիր։

ՀԱՃԻ ՍԱՐԻՄ ՈՐԴԻՔ
Վաճառատուն օսմանեան և եւրոպական յօտօրեղէններու
Բերա, Թագսիմ, Թիւ 52 և 54

Այս հանրածանօթ վաճառատունն որ բազմապատկած է իր բոլոր ապրանքի տեսակները, կ'ստանձնէ նաև հարսնիքներու, կնունքներու, տնային հանդիսութեանց, ինչպէս նաև նմանօրինակ ամէն առիթներու մէջ պէտք եղած շաքարի, անուշեղէնի, լիքէօրի, մոմերու և ուրիշ նիւթերու հայթայթումը, ինչպէս նաև սպասարկութիւնը։ ՋԱՏԿԻ ՋԷՕՐԷՔՆԵՐ կ'պատրաստուին շատ ընտիր։ Հարկ է սակայն օր առաջ ապսպրել։
ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ.—«Հաճի Սարիմ որդիք» վաճառատունը ո՛չ Բերայի մէջ, ո՛չ ալ ուրիշ տեղ մասնաճիւղ ունի։ 50—29

ՍԻՆԿԷՐ
ՀԱՑԹԱՑԹԻՉ ԿԱՑՍ. ՊԱԼԱՏԵԱՆ
THE SINGER MANUFACTURING Cº

Սինկէրի կարի մեքենաները զուտ անգլ. պողպատէ շինուած ըլլալով, իրենց տոկունութեամբ այնքան գնահատուած են որ ամէն կողմ տարածուած են, և բոլոր ընտանիքները, դերձակներն ու կօշկակարները լաւ Սինկէրի մեքենայ ունեցած են զարմանալի։ Սինկէրի Ընկերութիւնն քսան 400 է աւելի պատուոյ մետալներ և յանձնարար ստացած է բոլոր ցուցահանդէսներու մէջ։
Մասնաճիւղեր բոլոր աշխարհի մէջ։
Սինկէրի մեքենաները կ'վաճառուին՝ Բերայի, Ստամպօլի, Ղալաթիոյ մէջ։
Բերա) Շէրաթ Ճամբայ Գրան—Մարշէի դիմաց Թիւ 345 և 343 կրկին
Ղալաթիա) Սինկէր Խան, Թիւնէլին առջեւ.) Քարաքէօյի կամուրջին դիմաց.
Ստամպօլ) Սուլթան Համամ Թիւ 2.) Սուլթան Պայազիտ Թրամվէյի Սէրասքերին դիմաց Թիւ 13
Սկիւտար, Ջաղջի Պազար, Թիւ 120.
[illegible] Բերա, Շէրաթ [illegible], Թիւ 343 և 345 կրկին, [illegible] 50—32

ՕՍՄ. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԴՀ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՀԻՄՆԵԱԼ
1892 ՕԳՈՍՏ. 2/14 ԵՒ 1310 ՄԷՖԵՐ 20 ԹՈՒԱԿԻՐ ՖԷՐՄԱՆՈՎ

Դիմել Ընկերութեան Կեդր. գրասենեակը, Ղալաթիա, Քարաքէօյ, Ենի խան և կամ հետեւեալ հասցէներուն. —

Մասնաճիւղ Օսմ. Կայս. Պանքայի, Ենի Ճամիի հրապարակ.
Պոլիս ՄՄ. Ի. Սասոց և Ռոսիդի, Շէյխ իւլ Իսլամ խան, Պահճէ գաբու Թիւ 10
Ցարութիւն էֆ. Բէյլէրեան, Այ Ստեփանօ
Մագրգիւղ, Մ. Ա. Անժելիտէս, կայարանի հրապարակ.
Գատը գիւղ, Բեամիլ էֆ., չուկայի հրապարակ.
Գատըգիւղ, Մ.Ա. Անդիրա, Մոտա Ճատտէսի.
Պոլիս.— Միւնիր Պէյ. Սուլթան Համամ, Թէրզագը խան, Թիւ 8, Ա. յարկ և 9
Ս. Ադամեան, Ղալաթիա, Ինայէթ խան
Ա. Եօանիտիս, Էրէնքէօյ.
Ապտի պէյ, Վէզնէճիլէր.
Պէօյիւքտէրէ, Մ. Ա. Տէմարքի.
Ղալաթիա, Մ. Ա. Բիրժանց, Թիւ 12, Թիւնէլ խան.
Ղալաթիա, Մ. Էդիէն Բրէմէրի, Թեվէքքէլ խան
Բերա, Մասնաճիւղ Օսմ. Կայս. Պանքայի, Մեծ Փողոց.
Շիշլի, Մ. Է. Ռոսսի,
Պէօյիւքտէրէ Ճատտէսի. Թիւ 137.
Մեծ Կղզի, Րէսուլ էֆ.
Բ. Սոմմարիբա, Բէնտիք
Ժ. Քիլիարիտիս, Ղալաթիա Պորսային դէմ.
Ս. Այմէլօղլու, Պոլիս.
Իհսան պէյ, Բիւյիւք Իսմայիլ փաշա խան.

Գործակալութիւնք Օսմ. գլխաւոր քաղաքաց մէջ։ 100—34

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ Ի Ծ. ԱՐԵՒԵԼՔ

«ԵՐԿՆԱՅԻՆ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՆ ՄԷՋ»

ԳՐԵՑ.— ՓԻԷՌ ԼՕԹԻ (25)

Դ.—ԵՐԿՆԱՅԻՆ ԱՐՔԱՅԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Պատկերներն այն նախնեաց, որոնք որսի են գացած կամ կ'երազեն միայնակ, անտառներու մէջ կամ վայրի վայրերու մէջ, որոնք սարսափ կ'ազդեն, ինչպէս նաև անձկալարօտ բաղձանքը կ'ներշնչեն հին ատեններու բնութեան, ժայռերու ու ծառերու անկոխ ու չպղծուած աշխարհին։ Թուխ մետաքսեղէններու վրայ ջրաներկով գծագրուած, անհետացած դէմքերու պատկերներ, որոնք քիչ մը Իտալացի Բաւմիթեֆներուն անմեղ չնորհալիութիւնը կ'յիշեցնեն. տժգոյն, տժգոյն, գրեթէ անգոյն պատկերներ, որոնք աւելի մարդերու ցոլքեր են կարծես, տարտամօրէն սեւեռուած հող ու փախչելու մտապատրաստ. պատկերացումի ու ձև տալու կատարելութիւնը յայտնի է որ ուինչով է ձեռք բերուած, բայց անոր բովանդակ զօրութիւնը կ'կեդրոնանայ աչքերուն մէջ, որոնք ճ'շեռ ու յոգնած են և որոնք ձգգի, արտակարգ անկնթարթի մը մէջ, կ'պլրեցնեն դէմ առ դէմ, հին օրերու դէմքերու հետ, որոնք դարերէ ի վեր կ'ննջեն փառաւոր դամբարաններու տակ... Եւ ըսել թէ, բոլոր այս պատկերները գերազանցապէս սուրբ բաներ էին, զորս Եւրոպացիները տեսած չէին երբեք, և որոնց վրայ ոչ իսկ կասկած ունէին։

Ուրիշ երկարաձիգ պաստառներ, որոնք պարզուած են հիմա քարայատակներուն վրայ և վեց կամ ութը մեթրի չափ կան, կ'ներկայացնեն թափօրներ, արքունական ընդունելութիւններ, դեսպանական մարմիններու, հեծելազօրքերու, զօրաբանակներու, դրօշներու տողանցութիւններ. հազարաւոր պզտիկ մարդուկներ, որոնց զգեստները, ասեղնագործութիւնները, զէնքերը, այնչափ նուրբ կերպով աշխատուած են ու մանրամասնօրէն նկարուած որ, կ'արժէ որ մարդ խոշորացոյցով դիտէ զանոնք։ Դարերու մէջ փոխուող կամ տեւող արարողութիւններուն ու հագուստներուն չինական պատմութիւնը ամբողջովին կ'խտանայ այդ թանկարժէք մանրանկարներուն մէջ։— Նոյնիսկ մենք անոնց մէջ, կ'գտնանք, Լուի ԺԴ. ի մէկ դեսպանութեան ընդունելութիւնը զոր երբեք է չինական չեմ գիտեր որ Կայսրը. յոյժ ֆրանսական դէմքերով պզտիկ մարդիկ են անոնք, որոնք Արև—Արքային (Լուի ԺԴ. ին) պէս կեղծամներ են դրած և հագուած են այնպէս իբր թէ Վերսայլի մէջ կոչողավի պատկելու եղած ըլլային։

Մեհեանին խորը, կնքուած թեւերով, ինը մեծաքանչ դուռները, ինը մեռելական խորանները կ'ծածկեն։ Ինծի համար կ'բարեհաճին փրցնել կարմիր մեղրամոմէ կնիքները և պառնել՝ այդ այնչափ արգիլեալ մուտքերէն մէկուն կոպէ կապերը, և կ'մտնեմ խիստ նուիրական սրբարաններէն մէկուն մէջ,—որուն փառքը կ'ճառագայթէր ԺԸրդ դարուն սկիզբները։ Ցեանապետ մը հրաման ունի ընկերանալ ինծ, այս սրբապղծութեանս մէջ, ձեռքը բռնած՝ վառ ճրագ մը որ կարծես ակամայ կ'փողփողի ու կ'լուսաւորէ, դամբարանին ցուրտ ու աւելի անօսր մթնոլորտին մէջ։

Մեհեանը արդէն իսկ բաւական մութ էր. բայց հիմա հոս գիշերային խաւար մըն է որ կ'տիրէ, և կարծես հող ու մոխիր են թափեր բոլոր առարկաներուն վրայ. մինչ այն փոշին որ անդուլ կ'կուտակուի Բէքինի վրայ, իբր զառամութեան ու մահուան պինդ ցուցանիշ։ Դուրսի լոյսը որչափ ալ մեղմացած ըլլար արդէն ինքնին, նորէն ցերեկուան լոյսէն, մէկէնիմէկ, խաւարին մէջ չմորած պզտիկ ճրագի մը լոյսին փոխանցուելով, մարդ նախապէս չփոթ կ'տեանայ և վարանք մը կ'ունենայ առաջին առիթով, մանաւանդ եթէ վայրն ալ ինքնին գրաւիչ է ու ցնցող։ Առաջքս ունիմ քանի մը աստիճանէ բաղկացած սանդուխ մը, դէպի տեսակ մը խորան առաջնորդող, որ գրեթէ անծանօթ արուեստի մը պատկանող առարկաներով ծանրաբեռնուած կ'թուի ինծի։

Եւ աջ ու ձախ, կնճռոտ կղպանքներով գոցուած, սև լաքէ, պարզ ու խիստ դրսերևոյթով պահարաններ կան, որոնց մէջը բանալու ու նայելու արտօնութիւն ձեռք բերած եմ. անոնց ներքին մասերուն ու գաղտնի խորշերուն մէջ, հարիւրներով թաղուած կան այդ զմուռները, եղնգաքարի, աչմի ու ոսկիի ձոյլերով կազմուած ծանրածանր զմուռներ, որոնք իր կեանքին բոլոր պարագաներուն և իր բոլոր գործողութիւններուն առիթով են կոխուած ու պատրաստուած. անգնահատելի նըշխարներ՝ որոնց այլ ևս ոչ ոք պէտք էր ձեռք դպցնել յուղարկաւորութենէն վերջը, և որոնք հոն կ'քնանային երկու անգամ հարիւր տարիէ ի վեր։

Ցետոյ կ'ելլամ խորանին առջև, և յիմնապետը, իր պզտիկ ճրագը կ'պտըտցնէ հոն գանուող հրաշալիքներուն առջև. աչմէ մականներ, արտակարգ կերպով ու սխրալիօրէն պարզ ձևերով կամ չփոթեցուցիչ կերպով բարդ ճաշակով անօթներ, մութգոյն աչմէ, տժգոյն աչմէ, ձոյլ ոսկիէ, կռած ու բանուած ոսկիէ... Եւ այդ սեղանին ետին, ընկրկուն մթութեան մը մէջ, խոշոր դէմք մը, զոր նշմարած չէի դեռ մինչեւ այն ատեն, չեղ նայուածքով մը զիս կ'հետապնդէ, դեղնագոյն մետաքսէ երկու վարագոյներու ընդմէջէն, որոնց բոլոր ծալքերը գրեթէ սեցած են փոշիէն. անհետացած դէմքի մը տժգոյն մէկ պատկերը, ոսկի վրայ հանուած ու բնական մեծութիւնով պատկեր մըն է ան, որ մեր խեղճուկ ու խուժգուժ ճրագին լոյսին տակ, այն աստիճան ջնջուած ու թափանցիկ երևոյթ մ'ունի որ, աղօտ հայելիի մը մէջ ցոլացած ուրուականի մը պատկերը կ'կարծես զայն... Արդ, ի՞նչ անանուն սրբապղծութիւն, այդ մեռելին համար, քան մեր կողմէն բացումը այդ պայուսակներուն՝ ուր կը հանգչին իր զմուռները, ինչպէս նաև միմիայն մեր ներկայութիւնը, ի մէջ այլոց այս անթափանցելի վայրին մէջ, որ կը գտնուի ոչ նուազ անթափանցելի քաղաքի մը կեդրոնը...

Երբ ամէն բան խնամով կ'գոցուի կրկին, երբ կարմիր մեղրամոմէ կնիքները կ'փակցուին նորէն իրենց տեղը, և վաղեմի դէմքին տժգոյն ցոլքը, իր լըռութեան, իր խորհուրդին, ու իր սովորական խաւարին հետ մինակ կ'մնայ վերըստին, ես կ'շտապեմ դուրս ննտուել հոս տիրող գերեզմանական ցուրտէն, աւելի լայնօրէն օդ շնչել, և դարևանդին վրայ դարձեալ գտնել աշնանային այն քիչ մը արևը՝ որ կ'մաղուի մայրիներուն ոստերուն ընդմէջէն։

Այսօր, ցերեկուան ճաշս ընել կ'երթամ, պալատին ծայրագոյն հիւսիսային կողմը, ուր հրաւիրուած եմ «Ծերամի մեհեան»ին մէջը բնակող Ֆրանսացի սպաներու կողմէ։ Ատիկա ալ ոչ նուազ զմայլելի ու վաղեմի օրրավայր մըն է, զոր կ'կանխեն պերճաշուք բակեր՝ ուր պրոնզէ անօթներ մարմարէ թէրասներ կը պճնազարդեն։—Կանանչութիւններու մէջ խորասուզուած մեհեաններու ու ապարանքներու աշխարհ մըն է, այդ «Դեղին քաղաք» կոչուածը։ Մինչեւ անցեալ ամիս, այն զբօսաշրջիկ ճամբորդները որոնք Չինաստանը այցելած ըլլալ կ'կարծէին և որոնց համար այս բոլորը փակուած, արգիլուած կ'մնային, արդարեւ չէին կրնար երևակայել հրաշալի այն Բէքինը՝ զոր պատերազմը բացաւ մեր առջև։

⁂ Երբ ժամը երկուքին ատեններ, Բոլորաձև ապարանքիս ճամբան կ'բռնեմ կրկին, կիզիչ արև մը կ'ճառագայթէ սև մայրիներուն և ուռիներուն վրայ, որոնց տերևները կ'թափթփին. մարդ, ամառուան մէջ եղածի պէս, շուք տեղուանքը կը փնտռէ։ Եւ դրանս մօտ, Մարմարէ կամուրջին մուտքին առաջքը, տխրատեսիլ դրացիներս, լօթիւսներուն մէջը փառած, կապոյտ չրջազգեստաւոր երկու դիակները, լոյսի հեզնական պայծառութեան մը մէջ կ'լոգնան։

Երբ պահակ զինուորները, ետեէս կը գոցեն այն տեսակ մը ցած ու ծածուկ դուռը՝ ուրկէ կ'մտնուի իմ կախեալ պարտէզներս, ինքզինքս նորէն մինակ կը գտնեմ լռութեան մէջ,— մինչև այն ժամը՝ ուր այդ արևին չարաշուքները, աւելի չեղ ու աւելի չարագոյն իյնալով գրասեղանին վրայ, թաղծալի իրիկնամուտը կ'ծանուցանեն ինծի։

Հազիւ սեղանատրուած եմ աշխատութեան համար, երբ գլխու բարեկամական թեթև հպում մը, ուշադրութիւնս գրաւելու համար խորհրդապահ կերպով մը որունքիս զարնուելով, կասուին այցելութիւնը իմաց կուտայ ինծի։— Զգենք որ ես ալ արդէն նախատեսած էի այդ այցելութիւնը և ասկէ վերջն ալ ամէն օր պէտք եմ հաւատալ ըլլալ զայն ընդունելու։

Ժամ մը կ'անցնի, խեղճ անդորրութեան մը մէջ, զոր շատ շատ, ագռաւի մը երկու կամ երեք կռինչները կ'ծակծկեն։ Եւ յետոյ, պարիսպին ստորոտը, հեծելազօրքերու քառասմբակ արշաւին ձայնը կ'լսեմ, որ մեծ ժխոր կ'հանէ ճամբուն քարէ յատակներուն վրայ. մարաջախտ ոը Վալտէրզէն է ան, եկին ձգած իր հետևորդ զօրքերը, որոնք իրենց նիզակներուն ծայրը դրօշիկներ կ'կրեն։ Իր հօսկէ ոչ շատ հեռու բնակած ապարանքը կ'վերադառնայ ան, ապարանք մը՝ որ բոլոր բնակավայրներուն ամէնէն ճոխապաններէն է։ Մարմարէ կամուրջին վրայ նայուածքով կ'հետեւիմ արագաշարժ այդ հեծելավարիկներուն որոնք կը հեռանան, ձախ կ'դառնան և կ'կորսուին ծառերուն ետին։ Եւ լռութիւնը անմիջապէս կ'վերահաստատուի, առաջուան պէս բացարձակ։

Երբեմն երբեմն, կ'երթամ չրջագայիլ իմ բարձր ու քարայատակուած թէրասներուն վրայ, ուր ամէն անգամուն նոր բաներ կ'գտնամ։ Մայրիներուս ստորոտը, տհագին թմբուկներ կան, որոնք Ոգիները կանչելու կ'ծառայեն. կան նաև դեղին քրիզանդէմներու ու Հնդկական դեղին մխականներու տնկավայրեր, որոնք սառնամանիքէն ազատած մէկ քանի ծաղիկներ ունին տակաւին. կայ նաև, մարմարէ ու ֆայանսէ տեսակ մը ամպհովանի, որ նախապէս անբացատրելի կերպարանքով առարկայ մը կ'պատսպարէ. այդ առարկան ուրիշ բան չէ մոտէն, բայց եթէ աշխարհի մէջ գտնուած աչմի մեծագոյն զանգուածներէն մէկը, որ ծովի ալիքի մը նմանութիւնով է տաշուած և որուն փրփուրին մէջէն շրջէն հրէշներ կ'պայթքին։

(Շար.) Թարգմ. ՉԻՖԹԷ-ՍԱՐԱՖ